

ՄՈՎՍԵՍ ԱՊԵՐԸ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՔ

ՄՈՎՍԵՍ ԱՊԵՐ – գյուղացի դարբին – 70 տարեկան

ՄԱՐԿՈՍ – նրա որդին, իրավաբան – 50 տարեկան

ՄԻՐԱՐՓԻ – հարսը – 47 տարեկան

ԱՐՇԱԿ – թոռը, իրավաբան, դրվագող – 24 տարեկան

ՀԱՍՈ – շրջիկ բանվոր – 70 տարեկան

ՄՏԵՓԱՆ – հարևան – 35 տարեկան

ԱՐՓԻԿ – նրա կինը – 30 տարեկան

ԱՆԾԱՆՈԹՈՒՀԻ – 25 տարեկան

ՊԱՌԱՎԸ

ԵՐՎԱՆԴ

ՆԵՐՍԵՍ

ՄՍՏՈՒՑՈՂ

ԳԱՐՈՒՇ

ՀԱՐԲԱԾԸ

ԱՆԴՐԱՆԻԿ – հացի մեքենայի վարորդը

(Զանազան տարիքի մարդիկ, մատուցողներ, ռեստորանի հաճախորդներ ու նվագողներ)

(Դեպքերը տեղի են ունենում Երևանում, մեր օրերում):

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Երաժշտություն: Երևան քաղաքի համայնապատկերը: Անցում դեպի շենքերից մեկը:

Շքեղ կահավորված հյուրասենյակ: Թանկարժեք, հնաոճ կահույք, բյուրեղապակե հսկայական ջահ: Պատերին գորգեր, նկարներ, քանդակներ, ճապոնական հարթաքանդակներ, պերճ օրացույցներ, Սիրարփիի մոր՝ տիկին Վարդանուշի յուղաներկ նկարը: Հսկայական աթոռներն ու բազմոցը ծածկված են մուլաթով: Մարկոս Մարգարյանը տնական շքեղ խալաթով նստած է բազմոցին, կինը հուզված ետ ու առաջ է քայլում: Զգացվում է, որ վեճը վաղուց է սկսվել: Ամուսնու կողքով անցնելու ժամանակ տիկին Սիրարփին ասելությամբ լի մի հայացք է նետում ամուսնուն ու տալիս նույն հարցը:

ՄԻՐԱՐՓԻ – Դե ասա, հիմա ի՞նչ պետք է անենք, դե ասա: *(Քայլում է, շրջվում ու նորից է հարցնում)* դե ասա, է՛, ասա, հիմա ի՞նչ պետք է անենք:

ՄԱՐԿՈՍ *-(Անվրդով)* Կապրենք:

ՄԻՐԱՐՓԻ *-(Հուսահատ կանգ է առնում նրա առջև)* Ինչպե՞ս կապրենք, մարդ:

ՄԱՐԿՈՍ – Ինչպես ուրիշները... Սիրարփի, սիրելի տիկին, ես ինչպե՞ս կարող էի մերժել հորս: Դու էլ գիտես, որ մայրիկի մահից հետո նա գյուղում լրիվ մենակ է մնացել:

ՄԻՐԱՐՓԻ – Ինչո՞ւ է մենակ, քույր ունի, զարմիկներ ունի, ազգականներ ունի...

ՄԱՐԿՈՍ – Եվ ունի հարազատ որդի: Եվ այդ հարազատ որդին էլ իր հերթին որոշ չափով խիղճ ունի և վախ ունի: Երբ հոգեհացի ժամանակ մեր գյուղացիները մխիթարում էին հորս, գիտե՞ս ինչ էին ասում: Ասում էին՝ դու ինչո՞ւ ես մտածում, Մովսես ապեր, Մարկոսի նման որդի ունես: Մարդը տասնհինգ տարի իր զոքանչին էր պահում, հարազատ հորը չի՞ պահի, ի՞նչ է...

ՄԻՐԱՐՓԻ – Զոքանչի՞ն, այսինքն իմ մո՞րը:

ՄԱՐԿՈՍ – Հա:

ՄԻՐԱՐՓԻ – Եվ այդ դո՞ւ էիր պահում իմ մորը:

ՄԱՐԿՈՍ – Ինչպե՞ս թե: Բա ո՞վ:

ՄԻՐԱՐՓԻ – Իմ մայրն էր պահում քեզ, Մարկոս տղա: Իմ խեղճ մայրն էր պահում քեզ էլ, ինձ էլ, երեխաներին էլ: Իմ խեղճ մայրը ստրուկ էր այս տանը, սպասուհի էր ու լվացարար, աղբ թափող էր ու խոհարար: Եվ ի վերջո տան կողպեքն էր իմ մայրը, Մարկոս տղա: Համա թե համեմատելու բան գտար:

ՄԱՐԿՈՍ – Իսկ իմ հայրը տան կողպեք չի՞ կարող լինել, ինչ է...

ՄԻՐԱՐՓԻ – Եվ ուրեմն կարելի է համեմատել իմ մոր հե՞տ:

ՄԱՐԿՈՍ *-(Հեզնանքով)* Չէ, իհարկե: Ո՞ր տղամարդը չգիտի, որ իր հարազատներին չի կարելի համեմատել կնոջ հարազատների հետ: Կնոջ հարազատները ուրիշ են, ուրիշ, շատ-շատ լավն են: Տղամարդու ծնողներն ի՞նչ են... Իսկ կնոջ ծնողները աստված են, եղբայրները՝ հրեշտակներ, քույրերը՝ աղավնիներ, քեռիներն ու հորեղբայրները՝ բարերարներ, մորաքույրներն ու հորաքույրները՝ սրբեր... Ո՞վ չգիտի, որ նույնիսկ կնոջ նախկին հարևանները ուրիշ են, բոլորովին ուրիշ...

ՄԻՐԱՐՓԻ – Ծաղրում ես, հա՞: Այդպես չէ՞:

ՄԱՐԿՈՍ – Այդպես է: Այդպես է: Եթե այդպես չլիներ, ինչո՞ւ պետք է մեր տան պատերին քո մոր նկարը կախված լիներ և ոչ թե իմ մոր:

ՄԻՐԱՐՓԻ – Նախ քո մայրը նկար չուներ, որ կախեինք: Սա մեկ:

ՄԱՐԿՈՍ – Եվ երկրորդ՝ մեր պատերին տեղ կա՞ որևէ նկարի համար... Չկա, դու իրավացի ես, Միրարփի, չկա:

ՄԻՐԱՐՓԻ – Տեսնո՞ւմ ես:

ՄԱՐԿՈՍ – Բայց եթե պատերին տեղ չկա մայրիկի նկարի համար, գոնե մեր տան պատերի մեջ մի տեղ պետք է գտնենք հայրիկի համար: Հոգեհացի ժամանակ մեր գյուղացիները գիտե՞ս ինչ էին ասում. ասում էին՝ դու ինչի՞ ես մտածում, Մովսես ապեր, հարսդ բարի, մեծահոգի, ազնվական կին է...

ՄԻՐԱՐՓԻ – Այո, գազան չեմ: Բայց հիմա դո՛ւ ասա, Մարկոս, որտե՞ղ կարող է ապրել քո հայրը, տեղը ցույց տուր: Այստեղ՝ ճաշասենյակում հարմա՞ր է:

ՄԱՐԿՈՍ – Ոչ, ի՞նչ ես ասում:

ՄԻՐԱՐՓԻ – Մեր ննջարանի մասին ի՞նչ կասես:

ՄԱՐԿՈՍ – Ոչինչ:

ՄԻՐԱՐՓԻ – Արշակի սենյակն ո՞ւմ:

ՄԱՐԿՈՍ – Բացառված է:

ՄԻՐԱՐՓԻ – Մարինեի սենյակում հնարավոր է:

ՄԱՐԿՈՍ – Հնարավոր չէ:

ՄԻՐԱՐՓԻ – Ուրեմն էլ որտե՞ղ պիտի ապրի, Մարկ, ես չեմ, դու ես, ասա...

ՄԱՐԿՈՍ – Պատշգամբում:

ՄԻՐԱՐՓԻ – Որտե՞ղ:

ՄԱՐԿՈՍ – Պատշգամբում: Փակ, տաք տեղ է: Ինքն էլ թախտի սովոր: Թող ապրի այնտեղ, ի՞նչ կլինի:

ՄԻՐԱՐՓԻ - *(Ապշած)* Բա Տուզիկը:

ՄԱՐԿՈՍ - *(Խոցված)* Սիրարփի...

ՄԻՐԱՐՓԻ - *(Քիչ շփոթված)* Մարկ, Տուզիկը մեր տան անդամն է:

ՄԱՐԿՈՍ - *(Պայթելով)* Նահլաթ քեզ, չար սատանա, Տուզիկը մեր տան անդամն է, իսկ իմ հայրը...

ՄԻՐԱՐՓԻ – Ի՞նչ անեմ, դո՞ւրս շարտեմ:

ՄԱՐԿՈՍ – Ո՞ւմ:

ՄԻՐԱՐՓԻ – Ինչպե՞ս թե ում: Տուզիկին: Ո՞ւմ: Նախ՝ ես չեմ կարող ապրել առանց Տուզիկի, երկրորդը՝ Մարինեն կխելագարվի... իսկ ամենակարևորն այն է, որ Տուզիկը ազնվական ծագում ունի: Նրա պապն ու մայրը գեղեցկության չեմպիոններ են եղել: Նրա անունը գրանցված է շների պաշտպանության հանրապետական ընկերության պատվո գրքում:

ՄԱՐԿՈՍ - *(Տնքում է)* Շների պաշտպանության ընկերություն... Իսկ ծնողների պաշտպանության ընկերություն չկա ...

ՄԻՐԱՐՓԻ – Եթե կարիք լիներ՝ կստեղծեին: Ուրեմն՝ չկա: Եվ վերջապես դու ինչպե՞ս կարող ես դեն նետել Տուզիկին, երբ նրա հայրն էս:

ՄԱՐԿՈՍ – Ես... այդ շան հայրն ե՞մ: Խելքդ թոցրիք, այ կին...

(Սիրարփին պահարանի դարակից հանում և ամուսնուն է մեկնում մի թուղթ: Մարկոսը կարդում է) Անձնագիր: Տուզիկ Մարկոսի Մարգարյան... Եվ ո՞վ է այս խուլիզանության հեղինակը:

ՄԻՐԱՐՓԻ - (Օհիծաղելով) Շների պաշտպանության ընկերությունը... Այնտեղ շներին չեն գրանցում և թույլ չեն տալիս օգտվել զանազան արտոնություններից, եթե շունը խնամող չունի: Դրա համար էլ ստիպված գրեցինք քո անունը:

ՄԱՐԿՈՍ – Այ, շա՛տ շնորհակալություն մեծ պատվի համար: Իսկ ես ապրում էի ինձ համար, իմ կարծիքով միանգամայն մարդավարի, մտքովս էլ չանցկացնելով, որ արյունակցական սերտ կապ ունեմ շների հետ: Շա՛տ շնորհակալություն: Պատկերացնում եմ, թե որքան կուրախանան իմ պաշտոնակիցները, երբ նրանց հայտնի դառնա, որ ես շան հայր եմ:

ՄԻՐԱՐՓԻ - (Օհիծաղելով) Իզուր ես կարծում: Ինչո՞ւ պետք է զարմանան, երբ նրանցից շատերն էլ շների հայրեր են: Ես նրանց կանանց հաճախ եմ հանդիպում շնաբույժի մոտ և մրցումներում: Հա, Մարկ, չէր խանգարի, եթե ավելի մոտենայիր քո պետի տեղակալ Սիրունյանին: Նրա Բեբին ու մեր Տուզիկը կարող էին հոյակապ գույգ կազմել:

ՄԱՐԿՈՍ – Սիրունյանի՞: Ես էլ ասում եմ ինչո՞ւ է մսի կոմբինատի վերաբերյալ գործը քրքրում: Շան միսն է ապահովում:

(Լռում են: Մարկոսը ծանր շնչելով քայլում է սենյակում, կինը բազմոցին նստած թափահարում է գլուխը, ասես պատասխանելով ինչ որ ներքին հարցի):

ՄԻՐԱՐՓԻ – Ոչ, ոչ, դա անհնարին է: Մարինեն կխելագարվի:

ՄԱՐԿՈՍ – Որպեսզի չխելագարվի, Տուզիկին հենց իր սենյակում էլ թող պահի: Ի՞նչ կլինի: Գոնե ժամանակավոր: Համոզված եմ, որ հայրիկն այստեղ չի դիմանա: Առանց այդ էլ հազիվ համոզեցի, որ գա... Այսինքն ինքն էր ուզում, բայց...

ՄԻՐԱՐՓԻ - (Քսիծաղողով) Ուրեմն դու ես համոզել, հա՞: Ես այդպես էլ գիտեի: Երկու բաժակ խմել ես ու տղամարդ դառել, չէ՞: Լավ է, որ հորաքրոջդ ու քեռիներիդ էլ չես հրավիրել մեր տանն ապրելու: Ես միայն իմ մեռնելու օրը չգիտեմ, Մարկոս տղա: Ես միայն իմ մեռնելու օրը չգիտեմ:

ՄԱՐԿՈՍ – Եթե մի բառ էլ արտասանես, տիկին Սիրարփի, ես քեզ ստույգ կհայտնեմ քո մեռնելու օրը: Պատշգամբը մաքրիր անմիջապես ու կտրիր շան հոտը: Հասկացա՞ ր:

ՄԻՐԱՐՓԻ – Մարկ... Մարկ... Ի՞նչ կարիք կա այդ տոնով խոսելու... Դե մի բան պետք է անենք: Բա ինչ, մարդ ենք, հո գազա՞ն չենք: Դու էլ գիտես, որ ես սիրում եմ հայրիկին: Որ խոսք ես տվել, հո դրսում չենք թողնելու: Մարդ ենք, չէ՞:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

(Դարձյալ շքեղ կահավորված, հայելապատ միջանցքը: Դռան զանգը մեղմորեն զնգում է: Հայտնվում են Մարկոսն ու Միրարփին: Մարկոսը բացում է դուռը: Հայտնվում է Մովսես ասպերը, մի ձեռքին՝ մեծ քթոց, մյուս ձեռքին՝ հնամաշ ճամպրուկ):

ՄԱՐԿՈՍ – Ապե՛ր...*(Գրկում, համբուրում, ձեռքից վերցնում է քթոցն ու ճամպրուկը):*

ՄԻՐԱՐՓԻ -*(Քթոցին նայելով) Ինչ նեղություն... (Ամուսնու խիստ հայացքի տակ մեկ փորձում է գրկել սկեսրայրին ու մեկ էլ բարևել ձեռքով: Եվ հարս ու սկեսրայր ծիծաղելի դրության մեջ են ընկնում):*

ՄՈՎՍԵՍ – Ո՞նց եք, ձեզ մատաղ...*(Փոքրիկ, սպիտակ Տուզիկը հարձակվում է Մովսես ասպոր վրա, խառնվում ոտքերի արանքում, կլանչում, պատռում գուլպան: Մովսես ասպերը վախեցած ցած է նայում):* Ես ի՞նչ է, ձեզ մատաղ...

ՄԱՐԿՈՍ -*(Հանգստացնելով) Ծուն է, շուն, մի վախեցիր:*

ՄՈՎՍԵՍ - Ծո՞ւն... Բա էս նոր ծնված թուլի մեջ որտեղի՞ց էդքան կատաղություն: Կորի, ա՛յ լակոտ... Վայ, էս ի՞նչ է անում: Ձեր ցավը տանեմ, դրան մի բան հասկացրեք:

ՄԻՐԱՐՓԻ – Տուզիկ, նա մեստո:*(Ծունն անմիջապես թողնում, հեռանում է):*

ՄՈՎՍԵՍ -*(Հարսին) Բա որ լեզուն գիտեիր, շուտ խոսեիր, էլի, հարս ջան: Այ քեզ կատաղած թուլա...*

ՄԻՐԱՐՓԻ -*(Ծիծաղելով) Դա թուլա չէ, հայրիկ: Վեց տարեկան շուն է:*

ՄՈՎՍԵՍ – Վեց տարեկա՞ն: Բա ինչի՞ չի մեծանում, այ բալա: Ուրեմն ճի՞շտ ա, որ ասում են, թե Ամերիկայում շներին փոքր ժամանակ կոնյակ են տալիս, որ չմեծանան:

ՄԱՐԿՈՍ – Չէ, ասպեր, սրանց տեսակն է էդպես...

ՄՈՎՍԵՍ – Պահ, ուրեմն սրանք էլ շան լիլիպուտ են, հա՞... ձեր ցավը տանեմ, համա որ վրա տվեց, գիտեցա, թե բրդի կծիկ ա...

ՄԻՐԱՐՓԻ – Դե համեցեք, համեցեք, հայրիկ...

ՄՈՎՍԵՍ -*(Փայլեցրած հատակին նայելով, վախեցած) Վախենամ ընկնեմ...*

ՄԱՐԿՈՍ – Կոշիկներդ հանիր, ասպեր...

(Մովսես ասպերը տնքալով հանում է կոշիկները)

ՄՈՎՍԵՍ – Բա դուք ո՞նց եք էս սատանի երեսի վրա ման գալիս, այ ձեզ մատաղ... էս ձեր ուզենալով եք պոլերն էսպես պլպլացնո՞ւմ, թե ստիպում են:

ՄԱՐԿՈՍ – Չէ, կարգն է այդպես... ապեր: Դու էլ կսովորես, դատարկ բան է: Մի երկու անգամ կընկնես, վեր կկենաս, կսովորես:

ՄՈՎՍԵՍ – Քեզ մատաղ, ես որ ընկա, էլ վեր կացողը չեմ...

(Մահելով, հարսի և որդու օգնությամբ անցնում է միջանցքը, թեքվում, մտնում հյուրասենյակ: Նստում է բազմոցի վրա գցված մովլաթին, վեր է կենում, նորից նստում: Նայում է մյուս աթոռների մովլաթներին, խնդմնդում է)

- Էս ինչի՞ համար է, ձեզ մատաղ, հո երեխա՞ չեմ...

ՄԱՐԿՈՍ – Վա՛յ, ապեր, վա՛յ...

ՄԻՐԱՐՓԻ – Որ կահույքը ուշ մաշվի, հայրիկ, գիտե՞ք ինչ արժե:

ՄՈՎՍԵՍ - *(Նայում է)* Հա, թանկ կլինի... *(Միրարփին դուրս է գնում)*

Գործի մեջ շա՞տ ես առաջ գնացել, տղա ջան:

ՄԱՐԿՈՍ – Չէ, հայրիկ: Իսկի միտք էլ չունեմ: Էլի նույնն եմ, սովորական իրավաբան:

ՄՈՎՍԵՍ – Բա ո՞նց է, որ հիմա ոնց որ թե ուրիշ տեսակ եք ապրում: Մերելով, խալիներով ու էդ պսպղուն զարդերով լցրել եք տունը, գետինը նախշել ու պլպլացրել եք: Մենակ ձեր հաշտը ոնց որ Վորոնցովի պալատը լինի: Բա էդքան խալի կփչացնեն...

ՄԱՐԿՈՍ – Հը՞, դուր չի գալի՞ս:

ՄՈՎՍԵՍ – Չէ, ինչի՞...

ՄԱՐԿՈՍ – Կյանքն է փոխվել: Կյանքը: Կյանքն առաջ է գնում, հայրիկ: Երեկվա պայմաններն այլևս չեն բավարարում մարդկանց: Մենք խեղճությամբ չենք հպարտանում, ինչպես մի ժամանակ և աղքատությունն էլ այլևս առավելություն և առաքինություն չենք համարում: Հիմա ամեն ինչ արվում է, որպեսզի մենք ապրենք բարեկեցիկ ու հարուստ:

ՄՈՎՍԵՍ - *(Հազում է)* Մենակ իրավաբաննե՞րը, թե ընդհանրապես...

ՄԱՐԿՈՍ – Ի՞նչ ես ասում, հայրիկ: Ընդհանրապես, բոլորը, հանուր ժողովուրդը: Իսկ հետագայում նաև ամբողջ մարդկությունը:

ՄՈՎՍԵՍ - *(Թեքվում նայում է որդու աչքերին)* Այ տղա, հո հարամություն չես անում...

ՄԱՐԿՈՍ - *(Ասես ապտակ է ստացել, ձեռքը այտին է տանում)* Բա եղա՞վ, հայրիկ: Հիմա գիտե՞ս ինչ խիստ է մեզ մոտ: Դեմքին ու դիրքին չեն նայում: Ով ուզում ես եղիր, նստեցնում են և վերջ: Հիմա շատ ուժեղ պայքար է ծավալվել կաշառակերության, կամ ինչպես դու ես ասում, հարամության դեմ: Շատ ուժեղ պայքար, հայրիկ...

ՄՈՎՍԵՍ – Դե որ հարամության դեմ կռիվը ուժեղացել է, ուրեմն ճիշտ է: Ծտի դեմ թնդանոթով հո չեն կրակի:

ՄԱՐԿՈՍ – Այսինքն... Այդ իմաստով... թերևս...

ՄՈՎՍԵՍ – Ու գիտե՞ս ինչի մեջս կասկած ընկավ, տղա ջան: Կներես, որ երեսիդ եմ ասում: Միրտս ցավում ա, դրա համար եմ ասում: Կասկած ընկավ, որովհետև նախ և առաջ տունդ աշխատող մարդու տան նման չի: Ոնց ասեմ, ոնց որ քո տունը չլինի, հասկանո՞ւմ ես, ոնց որ ուրիշի համար սարքած տուն լինի: Հետո, ցավդ տանեմ, շատ սիրուն ես խոսում, է՛, շատ սիրուն... հիմա ախր, ով գողանում ա, բոլորից բարձր ինքն ա գոռում ազնվության մասին: Որ գլխի չընկնեն: Բայց մեկ ա, գլխի են ընկնում: Մեր գյուղում էլ մեկը կար, դու գիտես. ասում էր մենք ամբողջ մարդկության շքեղ ապագայի համար ենք պայքարում ու թալանում էր գյուղը: Էնքան սիրուն-սիրուն խոսեց, մինչև որ նստեցրին: Աշխարհի մարդկությունից ձեռք քաշեց: *(Դադար)* Էդ շան տնագին ինչի՞ ես պահում քո տան մեջ: Մեր խեղճ շները սոված-ծարավ, կոծոծի ու ցեխի մեջ կորած, ամառ-ձմեռ լեզուները դուրս գցած կռվում են գելերի հետ ու հալից ընկնում, իսկ դուք էդ խաղալիքներին տան մեջ եք պահում, բանտիկ եք կապում վզներից, ծոցերումդ եք տաքացնում: Բա դա խղճի բան ա՞: Վախեցեք աստծուց, տղա ջան:

ՄԱՐԿՈՍ – Չէ, ես քեզ ինչպե՞ս բացատրեմ, հայրիկ, հասկանո՞ւմ ես...

(Ներս է մտնում տիկին Սիրարփին)

ՄԻՐԱՐՓԻ – Մուրճ բերե՞մ, հայրիկ:

ՄՈՎՍԵՍ – Մուրճը ո՞րն է, ... Էն սև գատը՞... ինչի՞... հաց-մաց չկա՞, հարս ջան, սոված եմ...

ՄԻՐԱՐՓԻ - *(Ամաչելով)* Մենք ժամը վեցին ենք ճաշում, հայրիկ:

ՄՈՎՍԵՍ – Լավ եք անում: Համա ես ինձ համար եմ ասում: Ե՛ս եմ սոված, քե մատաղ...

ՄԻՐԱՐՓԻ – Ախր ճաշը դեռ պատրաստ չէ, ես ձեզ ի՞նչ տամ:

ՄՈՎՍԵՍ – Բան չեմ ասում:

ՄԱՐԿՈՍ - *(Մրտնեղած)* Ի՞նչ է, տանը ուտելու բան չկա՞, այ կնիկ:

ՄԻՐԱՐՓԻ - (Շփոթված) Ասում եմ ճաշը պատրաստ չէ, թե չէ ի՞նչ է եղել, հայրիկ, ուզում ես, հաց, պանիր, երշիկ, բաստուրմա, խոզապուխտ բերեմ կամ շտապ ձվածեղ պատրաստեմ... մի քիչ կեր, մինչև որ...

ՄՈՎՍԵՍ – Վայ ես քո ցավը տանեմ, գլուխս պտտվեց, հարս ջան: Ու էդքանից հետո էլ ասում ես, թե տանը ուտելու բան չկա ...

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

(Ընդարձակ, շքեղ կահավորված խոհանոցը: Բացվում է պատշգամբի դուռը, հայտնվում է Սովսես ասպերը: Ոչ մի ձայն: Բոլորը քնած են: Ստուգում է կաթսաները, դատարկ են: Զգացվում է, որ քաղցած է: Արդեն հույսը կտրած նայում է նաև մի փոքրիկ կաթսա՝ ուրախանում է):

ՄՈՎՍԵՍ – Ցավը տանեմ իմ հարսի: Սովորությունս գիտի երևի: Գիտի, որ առավոտ շուտ հաց ուտող մարդ եմ ու ինձ համար ճաշ ա սարքել: Չէ, ախպեր, լավ հարս ունեմ: Դրսից մի քիչ չոր ա երևում, համա թե շատ փափուկ սիրտ ունի իմ հարսը... *(Խոսելու հետ միաժամանակ ճաշը տաքացնում է զազօջախի վրա: Հացը բրդում է մեջը ու ուտում է մեծ ախորժակով: Հետո լվացարանի տակ խնամքով լվանում է ափսեներն ու բաժակները: Նորից ականջ է դնում, ոչ մի ձայն: Դուրս է գալիս միջանոց: Կամացուկ հագնում է կոշիկները, բացում դռան սողնակը և դուրս գալիս: Մանդղահարթակում ականջ է դնում: Ոչ մի ձայն):*

ՄՈՎՍԵՍ – Համա թե քնում են էս քաղաքացիները: Սրանք կյանքը էսպես քնով կանցկացնեն... *(Բջնում է սանդուղքով: Ներքնից ինչ-որ չիկոց է լսվում և այն դռնից, որի վրա գրված է «Ս. Տ. Իշխանյան. Ինժեներ» դուրս է գալիս կակաչի նման սև ու կարմիր հագած մի ջահել կին: Նայում է շուրջը, կամացուկ իջնում է աստիճաններով):*

ՄՈՎՍԵՍ – Բարի լույս, աղջիկ ջան...

ԿԻՆԸ - (Ցնցվում է) Ո՞վ է:

ՄՈՎՍԵՍ – Շատ ես փոխվել, չճանաչեցի: Բարև...

ԿԻՆԸ – Բարի լույս:

ՄՈՎՍԵՍ – Դու էլ ինձ չճանաչեցիր, չէ՞: *(Օրծաղում է) Մարկոսի հերն եմ: Երեկ եմ գլուղից եկել: Դե հինգ տարի առաջ եմ տեսել քեզ, ո՞նց ճանաչեմ: Անունդ Արփիկ էր, չէ՞, աղջիկ ջան:*

ԿԻՆԸ – Ոչ, ոչ, դուք շփոթում եք, հորեղբայր, ես Արփիկը չեմ:

ՄՈՎՍԵՍ – Վայ, բա ո՞վ ես, աղջիկ ջան: Ստեփանի տնից դուրս եկար, չէ՞:

ԿԻՆԸ – Ես Արփիկի քույրն եմ... կներեք... շտապում եմ... ցտեսություն...

ՄՈՎՍԵՍ – Վայ, բա առավոտ շուտ էր ո՞ր ես վռագում, աղջիկ ջան:

ԿԻՆԸ – Շուկա, շուկա:

ՄՈՎՍԵՍ – Ապրես: Ամենախելոք մարդիկ առավոտ շուտ են բազար գնում: Համ էժան ա ըլնում, համ էլ առատ: Ապրես: Իսկ Ստեփանը ո՞նց ա, լա՞վ ա:

ԿԻՆԸ – Լավ է, ցտեսություն, հորեղբայր...

ՄՈՎՍԵՍ – Հա, աղջիկ ջան, ես մեծ մարդ եմ: Ինձ հարցնելն ամոթ չի: Երեխա ունեցա՞ն: Շատ էին ուզում խեղճերը:

ԿԻՆԸ – Չէ...*(Վազում է ցած)*

ՄՈՍԵՍ – Ափսոս... Առանց երեխայի դժվար ա... Ո՞նց կլինի...

ՏԵՍԱՐԱՆ

(Փողոց: Հացի խանութ: Ավտոմեքենայից մի ծեր, երկար բեղերով մարդ հաց է տեղափոխում: Ջահել վարորդը բանալին մատների մեջ խաղացնելով բղավում է բանվորի վրա):

ԱՆԴՐԱՆԻԿ – Շուտ արա, Հասո, շուտ արա, ես պարապ չեմ...

ՀԱՍՈ – Է, ես պարապ ե՞մ:

ԱՆԴՐԱՆԻԿ – Դե լավ, լավ, թո՛ի: Շատ մի խոսի, թո՛ի, պրծի...

(Մովսեսը մոտենում է):

ՄՈՎՍԵՍ – Բա դու խիղճ չունե՞ս: Ձեռքդ կթուլանա՞, որ օգնես մարդուն, հացը շուտ դատարկեք:

ԱՆԴՐԱՆԻԿ -*(Ձարմացած)* Բա դա մեզ վերաբերում ա՞...

ՄՈՎՍԵՍ – Այսինքն թե ինչի՞ քեզ չի վերաբերում: Դու մարդ չե՞ս:

ԱՆԴՐԱՆԻԿ – Տո, դու ո՞վ ես, է՛: Դու՞ ով ես: Սիրտդ ցավում ա, գնա դու օգնի: Էս թոշակառուները կյանքներս կերան, տո:

ՄՈՎՍԵՍ – Բա կարծում ես, չե՞մ օգնի:

(Մի արկղ հաց է վերցնում, որ տանի):

ՀԱՍՈ – Ախպեր ջան, հարկավոր չի: Հարկավոր չի, ախպեր ջան, մեծ մարդ ես, համ էլ կմունդառտես շորերդ:

ՄՈՎՍԵՍ - *(Չարացած)* Հացից շոր չի մունդառտովի: *(Խեթ-խեթ նայելով Անդրանիկին, մի արկղ էլ է վերցնում տանում):* Հացից շոր չի կեղտոտովի, այ, էդ տեսակ լակոտների շնչից կթունավորվի հացը: Սրան ո՞վ ա հացի վրա նշանակել: Բա ամեն մարդ իրավունք ունի՞ հացին կպչելու:

ԱՆԴՐԱՆԻԿ – Տո, դու իրավունք չունես կպչելու, դու: *(Ջինսի փոշին ծնկներից թափ տալով, բարձրանում է):* Սանիտարական ինսպեկցիան որ տեսավ, իմ հերը կանիծի:

ՄՈՎՍԵՍ – Ով քեզ նման տղա ունի, հերն արդեն անիծված ա:

ԱՆԴՐԱՆԻԿ – Տո դու ո՞վ ես, է՛...

(Մոտենում է միլիցիայի թաղային տեսուչը)

ՏԵՍՈՒՉ – Ի՞նչ է պատահել: Սա ի՞նչ աղմուկ է:

ԱՆԴՐԱՆԻԿ – Գետինը մտնեմ թե բան եմ հասկանում, Վազգեն ջան: Էս բիձեն առավոտ գիշերով կպել ա ինձ ու պոկ չի գալիս: Էլ լակոտ է ասում, էլ մունդառ, էլ հորս հիշեց:

ՏԵՍՈՒՉ – Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել, ընկեր: *(Չարմացած):* Դուք մեր թաղամասում չե՞ք բնակվում:

ՄՈՎՍԵՍ – Չէ, դոնադ եմ:

ՏԵՍՈՒՉ – Հյուր եք եկել և արդեն հասցրել եք առավոտ վաղ վիրավորե՞լ մարդկանց:

ԱՆԴՐԱՆԻԿ – Ասա է, ասա, է՛... ո՞վ գիտե որտեղ է խմել առավոտ շուտ...

ՀԱՍՈ – Էս մարդ պոլորովին մեղավոր չի, ընկեր տեսուչ: Այ էսքան մեղավոր չի: Անդոն ինձ հետ անպատիվ-անպատիվ կխոսեր, էս մարդ էլ պաշտպան կանգնեց ինձ, վալլահ-բիլլահ, թե սուտ կասեմ: Լավ մարդ ա էս մարդ:

ԱՆԴՐԱՆԻԿ – Հասո, դու քո հացը կերար: Էգուց քեզ համար գործ գտիր:

ՀԱՍՈ – Տո հա, քեզ հետ հաց ուտելն էլ հարամ ա, հաց տանելն էլ: Ափսոս Անդրանիկ անուն, որ քո վրեն են դրել: Դու ի՞նչ Անդրանիկ ես... Դու հենց Անդո ես, որ կաս:

ՏԵՍՈՒՉ – Լռեք: *(Մոպսեսին)* Եվ ուրեմն ո՞ւմ հյուրն եք դուք:

ՄՈՎՍԵՍ – Իմ տղի:

ՏԵՍՈՒՉ – Իսկ ո՞վ է ձեր որդին:

ՄՈՎՍԵՍ – Տղաս, էլի: Մարկոս է անունը: Մարգարյան: Էս շենքում ա ապրում:

ՏԵՍՈՒՉ – Ներեցեք... Դուք ուրեմն Մարկ Մոխսեյիչի հա՞յրն եք:

ՄՈՎՍԵՍ – Էդ ինչի՞ հանկարծ Մոխսեյիչ դառա, այ քեզ մատաղ, իմ անունը Մովսես է:

ՏԵՍՈՒՉ – Դե իհարկե, իհարկե... *(Շրջվում է դեպի Անդրանիկը)* Դե չքվիր, անմիջապես:
Անմիջապես, հասկացա՞ր:

(Անդրանիկը ետ-ետ նայելով ծուլորեն նահանջում է):

ԱՆԴՐԱՆԻԿ – Հիմա գալի՞ս ես ինձ հետ, Հասո, թե՛ չէ:

ՀԱՍՈ – Չէ: Որ մի մատ երեխա ես ու պապիդ չափ մարդուն Հասո կասես՝ չէ:

ԱՆԴՐԱՆԻԿ – Դե լավ, լավ, արի, քեռի Հասո: Արի գնանք:

ՀԱՍՈ – Չէ:

ՏԵՍԱՐԱՆ

(Ավտոբուսի կանգառ: Մայթի կողքին դրած գույնզգույն նստարան: Մովսես ապերն ու Հասոն նստած են)

ՄՈՎՍԵՍ – Լավ արիր, որ չգնացիր: Արածդ բանվորություն չի՞: Որտեղ էլ գնաս՝ կխնդրեն:
Հիմա դեկավարների գործն ա դժվար, տեղ չկա: Համա բանվորի համար գյուլլա են
գցում: Որովհետև գործ անողը պակասել ա: Իսկ երկիրը աշխատող մարդն ա պահում:
Խոսելով երկիր կպահվի՞:

ՀԱՍՈ – Է՛, իմ մեջքն իմ տղեն զարկավ, լաո: Ես բանվորության հետ ի՞նչ գործ ունեի: Ես
եզիդի մարդ եմ, ախպեր:

ՄՈՎՍԵՍ – Գիտեմ:

ՀԱՍՈ – Գիտեմ, որ գիտես: Իմ սաղ կյանքն ես սարերում եմ ապրել, ոչխարների մեջ,
ծաղիկների մեջ: Ու հաստատ գիտեի, որ սարերում էլ կթաղվեմ: Համա իմ տղեն իմ
մեջք զարկավ-կոտրավ, ախպեր, ինձ հանեց իմ սարերեն, կտրավ, պոկավ իմ

ոչխարներեն ու ինձ զցեց էս քաղաք: Ու միթամ իմ դարդը քիչ էր, էդ Անդոն էլ մի կողմից զարկավ:

ՄՈՎՍԵՍ – Դարդ չանես, Հաստ եղբայր: Իմ տղեն էստեղ ոնց որ թե մեծ մարդ ա: Կասեմ զանգ կտա քո պետին ու քեզ մի ավելի խելքը գլխին շոֆեր կտան:

ՀԱՍՈ – *(Հուզված)* Աստծո չափ շնորհակալ եմ, ախպեր: Բայց իմ դարդ հեշ: Քո տղեն թե մեծ մարդ ա, թող իմ խեղճ տղուն օգնի, ի՞նչ կլինի:

ՄՈՎՍԵՍ – Իսկ տղիդ ի՞նչ է պատահել որ...

ՀԱՍՈ – Դատի տակ ա, ախպեր:

ՄՈՎՍԵՍ – *(Ուրախացած)* Դատի տա՞կ, դատի տա՞կ: Եղավ:

ՀԱՍՈ – Ի՞նչն եղավ:

ՄՈՎՍԵՍ – Լավ ա, լավ ա, համարյա թե հաջողություն ա:

ՀԱՍՈ – Դու ինձ ձեռ չե՞ս առնում, ախպեր: Դատի մեջ ի՞նչ լավ բան կա: Բա դա ասելու բան ա՞:

ՄՈՎՍԵՍ – *(Օրծաղում ու հագում է)* Ի՞նչ: Մի նեղանա... Բայց որ ուրիշ գործ լիներ, ո՞վ գիտի, չկարողանար օգնություն ցույց տալ: Բայց որ դատի գործ ա, կանի:

ՀԱՍՈ – Ինչի՞, ինքն ո՞վ ա:

ՄՈՎՍԵՍ – Իրավաբան ա:

(Հաստն վեր է թռչում տեղից)

ՀԱՍՈ – Վայ, ես քո արևին մեռնեմ: Վայ, քո որդու արևին մեռնեմ: Վայ, ես էս օրվան մեռնեմ: Վայ, ես Անդոյի ցավը տանեմ:

ՄՈՎՍԵՍ – *(Տպտում է)* Էդ լակոտի ցավն ինչո՞ւ ես տանում:

ՀԱՍՈ – Ո՞նց թե: Բա որ Անդոն չլիներ, բա որ Անդոյի անտաշ-անտաշ խոսելը չլիներ, ես քեզ որտեղի՞ց կգտնեի, իմ ախպեր:

(Օրծաղում են, հագում, խփում իրար կողքի)

ՄՈՎՍԵՍ – Նստի, նստի ու հիմա պատմի, թե ինչ ա եղել:

ՀԱՍՈ – Պատմեմ, ախպեր: Իմ փոքր տղա Ջամիլը եկավ Երևան, տեխնիկում ավարտեց ու մնաց: Է, մնաց, մնաց, ի՞նչ անեմ, մեր գյուղից մի աղջիկ կար էստեղ, Շամամ անունով,

սերը կպել էր: Եկանք, մի տուն վարձեցինք Նոր-Արեշում, ոնց որ կարգն է գուռնա-
դիոլով հարսանիք արեցինք, գնացինք: Ախպորս ասեմ, ուղիղ մի տարի հետո Շամամ
հարսս մի լաճ կբերե լուս աշխարհ ու անունն էլ իմ անունը կդնի՝ Հասո: Հարսս
հիվանդանոցի մեջ, իմ տղեն իրա հարևան Սամսոնի հետ ուրախությունից կհարբի ու
երբ որ արաղը կպրծնի, կասի, Սամսոն, երթանք խանութ արաղ բերենք: Այ մարդ,
կասի Սամսոն, էս վախտ խանութ փակած ա... Ջամիլիս խելք աստված արդեն առել
էր. պահակի կուշտ հո կա, կասի, երթանք:

Կերթան խանութ ու ի՞նչ տեսնեն: Պահակ-բիձեն հարբած քնած ա մի յաշիկի վրա,
ծնկներին էլ դրած մի ժանգը կերած, տասնչորս թվի պատերազմից մնացած մի
այնալու...

ՄՈՎՍԵՍ – Հրացան...

ՀԱՍՈ – Քո ասածն ա: Կուզեն արթնացնեն պահակին՝ հեջ: Յաշիկի միջից մի շիշ արաղ
կհանեն, մի հատ կարմիր տասնոց կդնեն պահակի ծնկին ու կուզեն հեռանան: Ու հենց
էդ վախտ սատանեն Սամսոնին կասի՝ արի հանաք անենք:

ՄՈՎՍԵՍ – Պահ...

ՀԱՍՈ – Հա: Ջամիլ կասի պետք չի, Սամսոն կծիծաղա: Համա քանի որ աստված արդեն առել
էր Ջամիլի խելքը...

ՄՈՎՍԵՍ – Աստված չէ, արաղը...

ՀԱՍՈ – Քու ասածն ա: Ջամիլն ու Սամսոնը իրար խելքի կընկնեն, պահակի ծնկի վրայից
կվերցնեն այնալու... հրացանը, տեղը կբերեն ցախավել կդնեն ու կարմիր տասնոցն էլ
կդնեն ցախավելի մեջ: Կնայեն, կծիծաղեն, հրացանը կառնեն ու կերթան տուն...

ՄՈՎՍԵՍ – Մխալ բան են արել:

ՀԱՍՈ – Ասիր ու թողի՞ր: Սամսոն կասի՝ առավոտ շուտ կբերենք հրացանն ու իրեն կտանք:
Մի լավ ձեռ կառնենք: Ջամիլ կասի՝ հա: Համա դե էդ գործ չուր առավոտ չի հասնի:
Գիշեր միլիցիա պահակ կերթա կտեսնի, որ էսպես-էսպես պահակ հարբուկ է ու
հրացան չկա: Ո՞ւր է հրացան: Ու էստեղ մի անքուն պառավ կասի, որ էս տեսա,
հրացան առան ու տարան Սամսոնն ու Ջամիլը: Ու միլիցեն դուզ-դուզ կերթա,
կտեսնի, որ Սամսոնն ու Ջամիլը քեֆ կանեն սեղանի վրա, իսկ սեղանի տակ հրացանն
է: Կառնի տղերքին ու կտանի:

ՄՈՎՍԵՍ – Հետո՞:

ՀԱՍՈ – Էլ հետո՞ մնաց, ախպեր: Գործ կընկնի դատարան: Տղերք կասեն՝ հանաք են արել,
դատավոր կասի՝ հանաք չէք արել: Ու քանի որ վերջին խոսք դատավորինն ա, ամեն
մեկին երկու տարի կտան:

ՄՈՎՍԵՍ – Բա պահա՞կը:

ՀԱՍՈ – Պահական ի՞նչ: Կասեն հարբած չի եղել, ուշաթափ է եղել ու ձեռ չեն տա:

ՄՈՎՍԵՍ – Եղա՞վ:

ՀԱՍՈ – Ի՞նչ ասեմ, ախպեր, դատավոր կասի՝ եղավ: Հիմա դու ի՞նչ կասես:

ՄՈՎՍԵՍ – *(Լռությունից հետո, չափազանց լուրջ)* Ըհր: Ջամիլը ճիշտ էր օ՞րն էր տղա ունեցել:

ՀԱՍՈ – Հա, ախպեր, աշխարհ հո մութ չի՞:

ՄՈՎՍԵՍ – Ըհր, ըհր, իսկ հրացանի մեջ փամփուշտ եղել ա՞:

ՀԱՍՈ – Որտեղի՞ց, ախպեր, չի եղել... *(ցավով)* Երանի էլներ ու էր հրացանն էլ իմ ձեռքին ըլներ, պահեի դոշիս ու մեռնեի, պրծնեի էս ցավից: Հա: Տուն տեղ, մեծ քյուլփաթ, ոչխար ու շուն անտեր թողել եմ սարն ու եկել եմ: Որ թագա հարսիս պահեմ, էն անմեղ գառնուկին պահեմ: Ու դրա համար է, որ բանվորություն կանեմ: Թե չէ Հասոն ուր, բանվորությունն ուր...

ՄՈՎՍԵՍ – Ուրեմն գնդակ չի՞ եղել, կրակոց չի՞ եղել:

ՀԱՍՈ – Չէ, ախպեր, վալլահ-բիլլահ... *(Ձեռքերը սրտին է դնում)*:

ՄՈՎՍԵՍ – Ուրեմն հանաք է եղել: Քո տղի արածը փիս բան ա, կներես, Հասո եղբայր, քո տղի արածը լակոտություն ա: Համա հանցանք չի, չէ...

ՀԱՍՈ – Վայ, ապրի քո ումբրը, ապրի քո արևը: Դե Հասոն վազեց:

ՄՈՎՍԵՍ – Ո՞ւր:

ՀԱՍՈ – Վազեմ, պատմեմ հարսիս, թող ուրախանա խեղճը, օր ու գիշեր արցունքն աչքին ա:

ՄՈՎՍԵՍ – Սպասիր դեռ, այ մարդ, իմ ասածը հո կարևոր չի:

ՀԱՍՈ – Քո ասածը ամենակարևորն ա:

ՄՈՎՍԵՍ – Հա, համա տեսնենք, թե տղե՞ս ինչ ա ասում:

ՀԱՍՈ – Այ մարդ, այ ախպեր, տղեն ո՞նց կարա քո նման հոր խոսքի տակից դուրս գա: Աչքովս էլ տեսնեմ, չեմ հավատա:

ՄՈՎՍԵՍ – Հա, փառք աստծո, տղես շատ ա հարգում ինձ: Համա թե կարգ կա, օրենք կա, Հասո: Իրիկունը վեր կկենաս, կգաս ուղիղ մեր տուն: Այ, նայիր, էն ծաղիկները

տեսնո՞ւմ ես, մեր բալկոնն ա: Կգաս, իրար հետ կպատմենք, որ տղես միտք անի, թե որ կողմից մոտենա, որ օգնի քո տղին: Հասկացա՞ր:

ՀԱՍՈ – Վայ, ո՞նց չհասկացա, ախպեր ջան, իրիկունը քու տանն եմ: Հաստն երեխա՞ է, Հաստն կարգն ու օրենքը չգիտի՞: Տանն իմ ձեռքով հալած մի կճուճ արդար յուղ կա ու ոչխարի լավ մածուն, գնամ տղերքից էլ մի գառ վերցնեմ ու...

ՄՈՎՍԵՍ – Էդ բանը չանես (*հուզմունքից բարձրանում է տեղից*), էդ բանը մտքիցդ հանի, Հաստ: Իմ տղեն հալալ կաթնակեր ա: Հարամություն չի անում: Հասկացա՞ր:

ՀԱՍՈ – Հասկացա: Համա առանց դրա ո՞նց կլինի:

ՄՈՎՍԵՍ – Կլինի: Մարդկությունը պրծա՞վ: Մարդկությունը դառավ ապրա՞նք: Դառավ առ ու տո՞ւր... Եվ հետո եթե կուզես իմանալ, հիմա էն ժամանակները չեն: Հիմա շատ ուժեղ կռիվ ա հարամության դեմ: Ով որ բռնվեց, փրկություն չկա: Վերջ: Հասկացա՞ր:

ՀԱՍՈ – Թող քո ասածը ըլի... Ես վազա... ավտոբուսն եկավ...

ՄՈՎՍԵՍ – Տունը չմոռանաս...

ՀԱՍՈ - (*Չայնը*) Բա դա մոռանալու բան ա՞: Ախպեր:

(Ավտոբուսից մարդիկ են իջնում, անցնում: Իջնողների մեջ մի կին կա, որը նայում է Մովսեսու ապորն ու շրջվում, մոտենում: Ինժեներ Ստեփանի կինն է. Արփիկը)

ԱՐՓԻԿ – Մովսես ապե՞ր:

ՄՈՎՍԵՍ - (*Յնգվելով*) Հա...

ԱՐՓԻԿ – Բարև ձեզ, Մովսես ապեր: (*Մեկնում է ձեռքը*) Սրտանց, սրտանց ցավում եմ, որ չկարողացա ներկա լինել Վարսենիկ մայրիկի թաղմանը: Շատ ցավում եմ և ամբողջ սրտով ցավակցում եմ ձեզ:

ՄՈՎՍԵՍ – Շնորհակալ եմ, աղջիկ ջան... համա ներող կլնես, դու ո՞վ ես, աղջիկ ջան: Դու մեզ որտեղի՞ց գիտես:

ԱՐՓԻԿ - (*Օրծաղում է*) Մովսես ապեր, մոռացե՞լ եք: Ես Արփիկն եմ, Արփիկը, ինժեներ Ստեփանի կինը, Մարկ Մոխսեյիչի ներքևի հարևանի կինը... բժշկուհին: Չե՞ք հիշում, թե ինչպես սրսկեցի ձեզ: Հիմա էլ գիշերային հերթապահությունից եմ գալիս:

ՄՈՎՍԵՍ – Վայ, Արփիկ ջան... Շատ, շատ ներողություն, աղջիկ ջան, մեծացել եմ, աչքերս լավ չեն տեսնում: Համ էլ էսօր արդեն մեկին բարևել եմ քու տեղը ու էլ մտքովս չէր անցնում, թե քեզ կտեսնեմ:

ԱՐՓԻԿ - (*Օրծաղելով*) Ո՞ւմ եք բարևել:

ՄՈՎՍԵՍ – Քո քրոջը: Աստված պահի, շատ սիրուն քույր ունես, Արփիկ ջան:

ԱՐՓԻԿ – Իմ քրո՞ջը: Դուք իմ քրոջը որտե՞ղ եք տեսել, Մովսես ապեր:

ՄՈՎՍԵՍ – Էստեղ, որտե՞ղ: *(Օրծադրում է)* Հիմա պատմեմ: Ուրեմն, Արփիկիս ասեմ, առավոտվա ժամը վեցը կլիներ: Քունս չէր տանում: Տնից դուրս եկա ու մեկ էլ տեսա, որ ձեր դռնից մի սիրուն աղջիկ ա դուրս գալիս: Ասացի՝ դու կլինես, անունդ տվեցի ու բարի լույս ասացի: Ու մեկ էլ էդ աղջիկը, թե՛ շփոթում եք, հայրիկ, ես Արփիկը չեմ, ես Արփիկի քույրն եմ:

ԱՐՓԻԿ – Իմ քույրը՞ :

ՄՈՎՍԵՍ – Հա, հա, ինքն էլ էնքան վախեցած էր: Դե ո՞վ չի վախենա, թե որ մութ պաղեզդում հանկարծ... «Բարի լույս» ասես: Մի լավ գրից արինք: Համա դե վռագում էր, բազար էր գնում: Ասեց, թե առավոտ շուտ լավ բազար ա ըլնում... Չէ, էդ ոնց որ ես ասացի, ապրես որ...

ԱՐՓԻԿ - *(Կամացուկ)* Հո չեք շփոթում, Մովսես ապեր... Մեր տնի՞ց դուրս եկավ:

ՄՈՎՍԵՍ – Հա... հա... *(Հանկարծ վատ բան է գգում)* Դու չգիտեիր, հա՞, որ ինքը ձեր տանն էր...

ԱՐՓԻԿ - *(Մրմնջում է)* Գիտեի...

(Պոկվում է տեղից ու վազելով հեռանում)

ՄՈՎՍԵՍ - *(Կանգնած է այլայլված: Չայնը՝ կադրից դուրս)* Պահ, տունդ քանդվի, Մովսես, էս ի՞նչ արեցիր... Տե՛ր աստված, դու փրկության մի դուռ ցույց տաս, տե՛ր աստված...

(Մթնեցում)

ՊԱՏԿԵՐ ԶՈՐՐՈՐԴ

(Մովսես ապերը հուզված, ընկճված կանգնած է որդու տան դռան առաջ ու զանգահարում է: Ոչ մի ձայն: Նորից է զանգահարում: Երաժշտական զանգ է: Ոչ մի ձայն):

ՄՈՎՍԵՍ - *(Չայնը կադրից դուրս)* Լավ, էս մարդիկ չեն աշխատո՞ւմ, չեն սովորո՞ւմ... Պահ, հա, էլի, էսօր շաբաթ ա: Ինչի՞ պիտի աշխատեն...

ՍԻՐԱՐՓԻ - *(Նույն դռան ետևից)* Ո՞վ է:

ՄՈՎՍԵՍ – Ես եմ: *(Վախեցած ներքն է նայում)*

ՄԻՐԱՐՓԻ – Ո՞վ է:

ՄՈՎՍԵՍ – Ես եմ, ես...

ՄԻՐԱՐՓԻ – Կաշմար կակոյ տը...

ՄՈՎՍԵՍ – Ես եմ, ես...

ՄԻՐԱՐՓԻ – Մովսես ապե՞ր...

ՄՈՎՍԵՍ – *(Գոռու է)* Ես եմ, ես...

ՄԻՐԱՐՓԻ – Վայ, բա դուք պատշգամբում չե՞ք:

ՄՈՎՍԵՍ – Չէ, դռան հետևն եմ:

ՄԻՐԱՐՓԻ – Ինչո՞ւ:

ՄՈՎՍԵՍ – Ո՞նց թե ինչու: Մարդ եմ, էլի, քունս չէր տանում, դուրս եկա մի քիչ ման եկա: Դրա մեջ ի՞նչ կա:

ՄԻՐԱՐՓԻ – Հա... *(Բացում է սողնակը: Մովսես ապերը ներս է մտնում)*

ՏԵՍԱՐԱՆ

(Միջանցքը: Մովսես ապերն ու Սիրարփին)

ՄՈՎՍԵՍ – *(Հանելով կոշիկները)* Բարի լույս, հարս ջան...

(Ինչ-որ տեղից հայտնվում է Տուզիկը, բռնում Մովսես ապոր ոտքը)

Թեթ-թեթ, այ շուն, ա թեթ, ռադ եղիր... Ա հարս, մի բան ասա, ինձ կերավ...

ՄԻՐԱՐՓԻ – Տուզիկ... կամու յա գավարյու՞...

(Շունը փախչում է: Սիրարփին հորանջում է, թփթփացնում է բերանին):

Այ հայրիկ, բա ձեր քունը չի՞ տանում:

ՄՈՎՍԵՍ – Արևը քաչալի գլուխ ա վառում: Էս ժամին քնե՞լ կլինի, հարս ջան... *(Մովսես
ապերը ամաչում է նայել հարսին, որովհետև նա ճմրթված գիշերանոցով է: Խոհանոց է
մտնում: Հարսը հետևում է նրան)*

ՄԻՐԱՐՓԻ – Հայրիկ, հիմա եթե կարողանամ, Մարկին կարթնացնեմ ու ձեզ համար
նախաճաշ կպատրաստեմ:

ՄՈՎՍԵՍ – Չէ, չէ, ես կուշտ եմ: Ախր սովոր եմ շուտ ուտելու: Որ չտեսա՛, թե ինչ ճաշ ես եփել
ի՞նձ համար, վռագ-վռագ տաքացրի ու կերա... Արևդ ապրի, հարս ջան:

ՄԻՐԱՐՓԻ - *(Զարմացած)* Ի՞նչ ճաշ:

ՄՈՎՍԵՍ – Բոզբաշ էր, ինչ էր: Բայց շատ համով էիր եփել, լավ ձեռք ունես:

ՄԻՐԱՐՓԻ – Պատուհանի գոգին դրածը՞:

ՄՈՎՍԵՍ – Հա, բա ո՞րը:

ՄԻՐԱՐՓԻ – Եվ բոլորը կերա՞ք:

ՄՈՎՍԵՍ - *(Անհանգստացած)* Հա... Դե մի կուճուր աման էր ու հետո ախր շատ համով էիր
եփել, է՛, հարս ջան:

ՄԻՐԱՐՓԻ - *(Արցունքակալած աչքերով)* Բա հիմա Տուզիկն ի՞նչ պիտի ուտի:

ՄՈՎՍԵՍ – Պահ... շան համար պիտի մի քիչ թողնեի, հա՞...

ՄԻՐԱՐՓԻ – Ի՞նչ թողնեիք... Դա Տուզիկի ճաշն էր...

ՄՈՎՍԵՍ - *(Եվ սրտխառնուք է զգում, և միաժամանակ ծիծաղը գալիս է)* Պահ, ուրեմն ես լա՞փ
եմ կերել... Վայ, հարս ջան, վայ, էլ ի՞նչ օյին ունեիք իմ գլխին դնելու: Ուրիշ տեղ
չպատմես, ցավո՞ւ տանեմ, խայտառակ կլինեմ աշխարհով մեկ: Ուրեմն ես շան փայր
կտրող եմ դառն լ:

ՄԻՐԱՐՓԻ – Լա՛փ... հատուկ դիետիկ ճաշ էր: Բժշկի բաղադրատոմսով էի պատրաստել:
Տուզիկը հո ամեն ինչ չի՞ ուտում:

ՄՈՎՍԵՍ – Հա, դե հո մարդ չի, որ ամեն ինչ ուտի... *(Միրարփին բարկացած ինչ-որ շշեր է
շրխկացնում)* Թե խանութի հարց կա, ես կգնամ...

ՄԻՐԱՐՓԻ – Իսկ կարո՞ղ էք:

ՄՈՎՍԵՍ – Վահ, հո երեխա չե՞մ, խանութ չե՞մ տեսել:

ՄԻՐԱՐՓԻ – Այդ դեպքում շշերը դնում եմ: Կուզեք երեք հատ կաթ, երեք հատ թթվասեր, երեք հատ կաթնաշոռ...

ՄՈՎՍԵՍ – Ինչե՞ր, ինչե՞ր... Էդ թթվասերն ի՞նչ է...

ՄԻՐԱՐՓԻ – Սմետանա:

ՄՈՎՍԵՍ – Ի՞նչ, չհասկացա...

ՄԻՐԱՐՓԻ – Դուք դատարկ շշերը տվեք ու փոխարենը լիքը ուզեք: *(Մեկնում է թղթադրամը)*

ՄՈՎՍԵՍ – Վայ, բա ամոթ չի՞:

(Դուրս է գալիս միջանցք, շտապ-շտապ հագնում կոշիկները, բացում դուռը: Տուզիկը նորից հարձակվում է, բայց Մովսեսն ապերն արդեն արագորեն դուրս է գալիս ու փակում դուռը: Մի պահ լսում է, թե ինչպես է անգոր հաչում շունը և ասում է արդեն փակ դռանը)

ՄՈՎՍԵՍ – Դե գնա, շատ լավ եմ արել, որ ճաշդ կերել եմ: Քո հերն էլ անիծած:

(Վախեցած նայելով «Ինժեներ Ս. Տ. Իշխանյան» սայլիկով դռանը, արագորեն ցած է իջնում):

(Մթնեցում)

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Տուն, միջանցք, հողլը: Մարկոսն ու Սիրարփին)

ՄԱՐԿՈՍ – Ճիշտն ասած ես էլ լինեի կվախենայի:

ՍԻՐԱՐՓԻ – Պատկերացնո՞ւմ ես, ես կարծում եմ, նա պատշգամբում քնած է, իսկ ինքը դռան ետևից ասում է «Ես եմ, ես» ...

ՄԱՐԿՈՍ – Ինչ կարող ենք անել, Սիրարփի, մեծացել է հայրիկը: Ով գիտե, թե մենք նրա տարիքում ինչ տարօրինակություններ կունենանք: Քիչ առաջ էլ տեղամասային տեսուչը զանգահարեց: Հացի խանութում ինչ-որ հիմար պատմության մեջ է ընկել սկսել է արկղներ տեղափոխել...

ՍԻՐԱՐՓԻ – Տեսնո՞ւմ ես: Ախր գոնե հանգիստ նստի իր տեղը: Չէ, հիմա էլ ստիպեց, շշերը վերցրեց ու խանութ գնաց: Երկու ժամ է չկա: Հիմա երևի խանութն իրար է խառնել: Անցյալ անգամ չէ՞ս հիշում, վաճառողուհուն ստիպել էր «Ջերմուկի» շշերը սրբել, նոր տալ: Քիչ էր մնացել ծեծեին: Չես թողնում, չի լինում, թողնում ես՝ չի լինում: Չգիտեմ, չգիտեմ, չգիտեմ...

(Ինչ-որ տեղից թույլ թխկթխկոց է լսվում)

ՄԱՐԿՈՍ - *(Ականջ է դնում)* Արշակն արթնացել է:

ՍԻՐԱՐՓԻ – Հա, ամբողջ օրն էլի գլուխ է տանելու:

ՄԱՐԿՈՍ – Բայց սիրուն բաներ է սարքում, գիտե՞ս: Վերջին մոխրամանը տեսե՞լ ես: Հաստատ շնորհք ունի մեր տղան:

ՍԻՐԱՐՓԻ - *(Հառաչում է)* Դե եթե շնորհք չունենար, ինչո՞ւ պետք է իրավաբանականը ավարտելուց հետո նստեր տանն ու մոխրամաններ սարքեր: Ամոթից չգիտեմ, թե որտեղ թաքցնեմ գլուխս, իսկ դու ասում ես, թե շնորհք ունի: Էլ ինչո՞ւ սովորեց հինգ տարի: Ինչո՞ւ վատվեցի, տանջվեցի ես դրա ձեռքից:

ՄԱՐԿՈՍ – Դու ես տանջվե՞լ, թե ես: Նրան ո՞վ է համալսարան ընդունել տվել, դո՞ւ թե ես: Հինգ տարի շարունակ ո՞վ է տվել նրա քննությունները: Դո՞ւ թե ես: Ո՞վ է դիպլոմային աշխատանքը գրել: Դո՞ւ թե ես: Ո՞վ է նրա համար քննիչի տեղ գտել: Դո՞ւ թե ես:

Գիտեմ, շատ դժվար է, բայց կյանքում գոնե մեկ անգամ անաչառ եղիր, ձեռքդ սրտիդ դիր ու խոստովանիր, ես չէի՞ ասում, որ եթե ինքը չի ուզում, ուրեմն չարժե, որ իրավաբանական ֆակուլտետ ընդունվի: Չէի՞ ասում:

ՄԻՐԱՐՓԻ – Իսկ վա՞տ կլիներ, եթե իրավաբան դառնար: Հը՞, վա՞տ կլիներ, եթե մարդիկ կախում ունենային նրանից: Վա՞տ կլիներ, եթե նմանվեր իր հորը, նրա նման հարգանք ու պատիվ ունենար շրջապատում, հը՞:

ՄԱՐԿՈՍ – Է՛հ...

ՄԻՐԱՐՓԻ – Իսկ նա, այդ դիպլոմավոր իրավաբանը, տունը լցրել է այդ անիծյալ երկաթներով և մուրճն արած օր ու գիշեր թխկթխկացնում է իմ նյարդերի վրա: Եվ ո՞ւմ է քաշել, տեր աստված, ո՞ւմ է քաշել, չեմ հասկանում:

ՄԱՐԿՈՍ – Ինչո՞ւ չեմ հասկանում: Հասկանում ես և խնայում ես ինձ, իսկ ես ինձ չեմ խնայի: Հենց իր պապին է քաշել, էլ ո՞ւմ, իր դարբին պապին:

(Պապ խոսքի վրա միաժամանակ բացվում է միջանցքի դուռը, հայտնվում է Մովսես ապերը և բացվում է նաև Արշակի սենյակի դուռը: Պապն ու մորուքավոր թոռը հայտնվում են իրար դիմաց):

ՄՈՎՍԵՍ – *(Ձեռքի զամբյուղը ցած դնելով, ձեռքերը պարզած)* Արի, արի, պաշեմ քեզ, իմ թոռնիկ, իմ պապ...

ԱՐՇԱԿ – Ապեր ջան, ո՞նց ես, է՛, ապեր...

(Գրկում է պապին ու տանում, նստեցնում է խոհանոցի աթոռին)

ՄՈՎՍԵՍ – Այ տղա, շունչս, այ տղա... Արջ է, է՛, իսկական քոլի արջ:

ՄԻՐԱՐՓԻ – *(Ամուսնուն)* Իրար գտան... *(Զամբյուղը դնում է խոհանոցի սեղանին ու հերթով հանում է շշերն ու փաթեթները):* Էս ի՞նչ է... *(Սեղանին է դնում օղու մի մեծ շիշ):*

ՄՈՎՍԵՍ – Վա՞յ, էդ որտեղի՞ց:

ՄԱՐԿՈՍ – Դու ես բերել, մեզ է՞ս հարցնում:

ՄՈՎՍԵՍ – Հա, բոլորն էլ աչքով էին անում, վերցնում էին, ես էլ մտածեցի, թե պետքական բան է: Ես էլ աչքով արեցի: Ուրեմն արադ է՞, արադն էլ են էստեղ տակից տալի՞ս:

ԱՐՇԱԿ – Մինչև ժամը տասնմեկը օղու վաճառքն արգելված է, ապեր...

ՄՈՎՍԵՍ – Ինչի՞:

ԱՐՇԱԿ – Համընդհանուր պայքար է հարբեցողության դեմ, ապեր: Դրա համար էլ խանութպանները մի-մի ռուբլի ավել են վերցնում և նոր են թույլատրում խմել: Գլխի ընկա՞ր:

ՄՈՎՍԵՍ – Պահ, ձեր տունը չքանդվի... Հա, Արշակ, չնեղանաս, համա ձեր խանութի աշխատողները լրիվ անգրագետ մարդիկ են...

ԱՐՇԱԿ – Անգրագե՞տ: Ինչի՞...

ՄՈՎՍԵՍ – Երեք անգամ հաշվել տվեցի, համա էլի հիսուն կոպեկ ավել վերցրեց...

ԱՐՇԱԿ – Հա, շատ անգրագետ են...

ՄԻՐԱՐՓԻ – Է՞ս ինչ է...

ՄՈՎՍԵՍ – Հավվա է, հավվա... մեկ էլ երեխա վախտա եմ կերել: Որ տեսա, չդիմացա:

ՄԻՐԱՐՓԻ – Հիմա ո՞վ է հավվա ուտողը, հայրիկ... Աղբն ես ավելացնո՞ւմ...

ՄՈՎՍԵՍ – Վայ, ինչի՞, է, ի՞նչ է պատահել, այ հարս... թող մնա, ես կուտեմ:

ԱՐՇԱԿ - *(Թոցնում է մի կտոր)* Ես էլ...

ՄՈՎՍԵՍ – Տեսա՞ք: Աստծուն մի բարկացրեք:

ՄԻՐԱՐՓԻ – Բա սա՞ ինչ անենք: *(Հանում է էժանագին երջիկ)*

ՄԱՐԿՈՍ – Յոթանասուն կոպեկանո՞ցն է...

ՄՈՎՍԵՍ – Կուտենք, ի՞նչ կանենք, կալբաս ա, էլի... *(նայում է թոռանը)* հը՞:

ԱՐՇԱԿ - *(Ետ է քաշվում)* Բռռ...

ՄՈՎՍԵՍ – Դե լավ, չենք ուտի, կտանք շանը: Առանց էդ էլ ես մեղավոր եմ խեղճի առաջ, որ կերել եմ նրա ճաշը... *(Շփոթվում է)*

ՄԻՐԱՐՓԻ - *(Փոթկացնում է)* Եվ դուք կարծում եք, թե սա Տուզիկը կուտի՞:

ՄՈՎՍԵՍ – Շո՞ւնը... իմ շունը հում սոխ էլ է ուտում:

ՄԱՐԿՈՍ – Գուցե թե ուտի, թարմություն է...

ՄԻՐԱՐՓԻ – Տուզի՛կ... *(Գրկում է վրա հասած Տուզիկին, դնում սեղանին, երջիկը մոտեցնում: Շունը հոտ է քաշում, ֆոթացնում է և ցած գլորվում սեղանից)* Հը, կերա՞վ...

ՄՈՎՍԵՍ *-(Խեղճացած)* Բա որ շունն էլ չի ուտում, էլ ո՞ւմ համար են սարքում, ձեզ մատաղ...

(Դռան զանգ է լսվում, Արշակը գնում է, բացում դուռը ու վերադառնում):

ԱՐՇԱԿ *-(Մորը)* Էն մեր ցածի հարևան Ստեփանն է... Քեզ է ուզում:

(Մովսես ապերը ցնցվում է ու կծկվում տեղում)

ՄԻՐԱՐՓԻ – Ի՞նչ... *(Դուրս է գալիս):*

ՏԵՍԱՐԱՆ

(Միջանցքն է: Կանգնած է նիհար, բարձրահասակ Ստեփանը: Կոկորդը փաթաթված է շալով)

ՄԻՐԱՐՓԻ – Ստեփա՞ն, համեցեք ներս...

ՍՏԵՓԱՆ – Ոչ, ոչ...

ՄԻՐԱՐՓԻ – Ի՞նչ է պատահել, ես ձեզ լսում եմ:

ՍՏԵՓԱՆ – Ես այնքան հուզված եմ... ինչպարվում եմ... Արփիկը հեռանում է տնից:

ՄԻՐԱՐՓԻ – Ինչո՞ւ, ինչո՞ւ է ուզում հեռանալ:

ՍՏԵՓԱՆ – Չգիտեմ... ոչինչ չի ասում... ոչինչ... Եկավ հերթապահությունից... վշտի մարմնացում... մարմարե հայացք... ասաց, որ գնում է... իրերն է հավաքում... Եվ «Նաիրի» գորգը... և այլ և այլ բաներ, որ համատեղ աշխատանքով ենք ձեռք բերել, և ուրեմն կեսն իմն է... բայց թքած... նա հեռանում է... նա լքում է ինձ...

ՄԻՐԱՐՓԻ – Կաշմար կակոյ-տը... իսկ դու որևէ առիթ չե՞ս տվել... նու, նու, ինչպես ասեմ, որևէ այնպիսի բան չե՞ս արել, որ...

ՍՏԵՓԱՆ – Ի՞նչ էք ասում, տիկին Սիրարփի... ինքներդ էլ գիտեք... Ես պաշտում եմ նրան, ինչպարվում եմ... ես առանց նրա ապրել չեմ կարող...

(Խոհանոցը: Մովսես ապերը կծկված)

ՄՈՎՍԵՍ *-(Ցածր)* Սուտ ես ասում, շան որդի, մեղք ես, բայց շան նման սուտ ես ասում...

(Միջանցքը)

ՄՏԵՓԱՆ – Նա ձեզ շատ է հարգում... Աղաչում եմ... Եկեք, խոսեք նրա հետ, թող գոնե բացատրի... թե չէ, ինչպե՞ս կարելի է... հենց այնպես... Շատ եմ խնդրում:

ՄԻՐԱՐՓԻ – Գնանք, գնանք... հետաքրքիր է... Այսինքն շատ զարմանալի է... Կաշմար կակոյ տը... *(Հեռանում են)*

ՄԱՐԿՈՍ – Շատ տարօրինակ է: Հիանալի, համերաշխ ընտանիք էր: Եվ ահա՝ խնդրեմ, ես մի դատական քաղաքացիական գործ:

ՄՈՎՍԵՍ – *(Աչքերը փակ, ակամա շնչում է)* Տեր աստված, տեր աստված...

ԱՐՇԱԿ – Էդ ի՞նչ ես փսփսում, այ ապեր... Քեզ ի՞նչ է պատահել: Նրանք բաժանվում են, դո՞ւ ես մտածում: Արի, արի գնանք իմ արհեստանոցը, մի տես թե ինչեր եմ սարքել: Արի...

(Գնում են դեպի միջանցք-հոլլը: Արշակը առաջ է անցել: Մովսեսը զգուշ սահում է փայլուն պարկետի վրայով: Ճապոնական մենահայելու վրա դրված հեռախոսը զնգում է: Մովսես ապերը նայում է շուրջը, վերցնող չկա: Նորից զանգ: Վերցնում է լսափողը):

ՄՈՎՍԵՍ – Հա, լսում եմ...

ՄԱՐԿՈՍ – *(Հայտնվում է, շնչալուով)* Ես տանը չեմ, ես տանը չեմ:

ՄՈՎՍԵՍ – Ի՞նչ... ո՞ւմ... Մարկ Մոխեյիչի՞ն...

ՄԱՐԿՈՍ – Ես տանը չեմ, ես տանը չեմ...

ՄՈՎՍԵՍ – *(Լսափողը ցած է պահում)* Այ տղա, ո՞նց ասեմ տանը չեմ, երբ որ հրես կողքիս կանգնած ես... *(Լսափողը պարզում է որդուն)*

ՄԱՐԿՈՍ – Ապեր, ասա որ, ասա որ... *(Ձեռքի և շրթունքների շարժումներով ուզում է ինչ-որ բան հասկացնել):*

ՄՈՎՍԵՍ – Առ, դու ասա, որ տանը չեմ... օր ծերության քո երեսից սուտասան եմ դառնալո՞ւ, աննամուս:

ՄԱՐԿՈՍ – *(Լսափողը ձեռքին մտածում է, կնճռոտում է ճակատը: Խոսում է հանգիստ)* Այո: Չգիտեմ: Խոսել եմ: Տեսնենք: Հավանաբար: Իհարկե: Հուսանք: *(Լսափողը ցած է նետում, ֆշշում է հոր վրա)* Քեզ ո՞վ էր ասում հեռախոսին մոտենայիր: Հը՞, քեզ ի՞նչ, թե զանգում էր: Չե՞ս կարող հանգիստ մնալ, այ մարդ: Դու ուրիշ բան ու գործ չունե՞ս: Այ հայրիկ, այ ես քո ցավը տանեմ, մի բան որ անում ես, հարցրու, նոր արա, էլի: Մի բան որ ասում են, լսիր, էլի: Մեզանից ի՞նչ ես ուզում...

ՄՈՎՍԵՍ – Վա՛յ... ի՞նչ եմ արել, ձեզ մատաղ...

(Շրխկալով բացվում է մուտքի դուռը: Հայտնվում է Սիրարփին, հևալով դիմում է սկեսրայրին)

ՄԻՐԱՐՓԻ – Հայրի՞կ... հիմա էլ ընտանիքնե՞ր եք քանդում... հերթը ե՞րբ է մեզ հասնելու... էլ ի՞նչ փորձանք ունեիք բերելու մեր գլխին, ասացեք... Արփիկը գնա՛ց...

ՊԱՏԿԵՐ ՎԵՅԵՐՈՐԴ

(Արշակի սենյակը: Արհեստանոցը: Թափթփված մահճակալ:

Թափթփված, բայց շքեղ գրասեղան, որը լցված է գործիքներով ու կտրիչ-ծակիչ սարքերով: Լարերից հյուսված մի թիկնաթոռ: Մոզեսն ապերը խրվել է դրա մեջ: Արշակը նստած է մահճակալին):

ՄՈՎՍԵՍ – Չէ, քեզ մատաղ, համոզիլ մի, գնալ դեմ:

ԱՐՇԱԿ – Է, վերջ տուր, ապեր ջան... Հը՞, ապեր...

ՄՈՎՍԵՍ – Տափն էլ չի մտնում... Ինձ ասում ա՛ սուտ ասա...

ԱՐՇԱԿ – Մի նեղանա, ապեր ջան... Ախր նա սուտ որ չխոսի, չի կարա ապրի...

ՄՈՎՍԵՍ – Ասում ես, էլի...

ԱՐՇԱԿ – Հավատա, ով հասնում է, ասում է, թե իմ տղան, իմ հայրը, իմ ինամին անմեղ է, անմեղ տեղը նստեցրել են, ազատի... Էդ մարդն ի՞նչ անի, որ սուտ չասի... Մի նեղանա, ապեր...

ՄՈՎՍԵՍ – Չէ, բալա ջան, չեմ նեղանում: Ու թե որ նեղանում եմ, ինձնից եմ նեղանում: Որովիետև ձախորդ մարդ եմ, անբախտ մարդ եմ: Ուզում եմ լավ բան անեմ, փիս բան ա դուրս գալիս: Ուզում եմ ուրախացնեմ մարդկանց, լացացնում եմ: Ես էստեղի լեզուն չեմ իմանում, բալա ջան, լեզուն չեմ հասկանում, ոնց որ աճուճ-պաճուճների աշխարհն ընկած լինեմ: Դե ամբողջ կյանքս գյուղում եմ ապրել: Ի՞նչ եմ տեսել: Դրանից կըլնի, էլի...

ԱՐՇԱԿ – Է, ապեր ջան, իսկ ես որտե՞ղ եմ ապրել: Ես էլ քաղաքում եմ ծնվել, մեծացել: Բա իմ լեզուն ինչի՞ հասկացող չկա: Բա ես ինչի՞ իրենց լեզուն չեմ հասկանում: Ուրեմն այստեղ ուրիշ գաղտնիք կա: Տես, մաման ու պապան ինձնից նեղացել են, որ ես իրավաբան չդարձա...

ՄՈՎՍԵՍ – Է, դե նեղանալու բան ա, էլի...

ԱՐՇԱԿ – Չէ, ապեր, ճիշտ չի: Ես քեզ ոնց բացատրեմ: Դա հազար ու մի բանի հետ կապված հարց է: Ես, օրինակ, գետինը կմտնեմ, բայց չեմ կարողանա որևէ մեկին հարցնել, թե որտեղ էիր երեկ երեկոյան ժամը ուրից մինչև տասնմեկը: Ու, թե որ պատասխանեց,

սպանեն էլ չեն կարողանա ասել, թե սուտ ես ասում: Ես հավատացող մարդ եմ, ապեր, հասկանո՞ւմ ես: Ինչ որ ասեն, պիտի հավատամ, որովհետև ուրիշ ձևով ապրել չեմ կարող: Իսկ իրավաբանը պետք է կասկածամիտ լինի, պիտի չհավատա, պիտի ստուգի, պիտի վերանայի իր կարծիքը, նորից ստուգի, փաստեր հավաքի, հարցաքննի հազար ու մի մարդու:

ՄՈՎՍԵՍ – Բա նրա գործն էլ էդ է, ի՞նչ պիտի անի:

ԱՐՇԱԿ *-(Օրծադեղով)* Ապրես, պապ ջան, իմ ասածն էլ հենց այդ է, որ կա: Որ ամեն մարդ իր գործը պիտի անի: Ինչ որ իր սիրտն է ուզում և ինչ որ ինքը, գոնե իր կարծիքով, բոլորից լավ կարող է անել: Դե, տես, ինձ գոռով էին ուղարկում դասի, խրատում, պատժում, սպառնում էին: Հետո՞: Ի՞նչ դուրս եկավ: Իսկ ես առանց ստիպելու, հազար ու մի դժվարությամբ նյութեր ու մասեր եմ ճարում, գործիքներ հավաքում, փորձեր եմ անում, սովորում եմ ու թե թողնեն, կաշխատեմ առավոտից մինչև երեկո, առանց հաց ուտելու:

ՄՈՎՍԵՍ – Այ տղա, էսքան ասում ես ու ցույց չես տալիս, թե ինչ ես սարքում: Դե բեր տեսնեմ, էլի...

ԱՐՇԱԿ – Ախր դժվար է վարպետին ցույց տալն, է՛...

ՄՈՎՍԵՍ – Բեր, բեր, կեղծավոր...

ԱՐՇԱԿ – Բերեմ, պապ ջան...

(Ցածրիկ պահարանից ինչ-որ բան է հանում, մեկնում պապին, շարունակ նրա դեմքին նայելով: պապն ուսումնասիրում է, նայում, մի կողմ դնում, նորից նայում: Մի փոքրիկ եղնիկ է՝ չեչոտ քարի պատվանդանի վրա):

ՄՈՎՍԵՍ – Այ բալա, էս դու ես սարքե՞լ: *(Արշակը երջանիկ ժպտում է: Պապին մեկնում է մի շրջանակ: Նա պղնձի վրա ասեղով ծակելով ձի է նկարել: Մովսես ապերը նայում է երկար):* Որ մի բան ասեմ, հո չես նեղանա, տղա ջան:

ԱՐՇԱԿ – Ասա, պապ:

ՄՈՎՍԵՍ – Կարող ա թե ձեզ համար նշանակություն չունի, համա երբ որ ձին բարձրացնում ա գլուխը՝ առաջին ոտքերը չի ծալի: Ձիգ կպահի, հողին դիմհար սված, որովհետև ամեն բոպե պիտի կարողանա փախչել:

ԱՐՇԱԿ *-(Զարմացած)* Ճի՞շտ, պապ... իսկ դու որտեղի՞ց գիտես:

ՄՈՎՍԵՍ – Ե՞ս... Ես մազերիս համբարքով ձի եմ նալել, տղա ջան: Էս մազերիս չափ չէ, է՛, առաջվա մազերիս չափ...

(Վերցնում, դիտում է նաև ուրիշ գործեր՝ մոխրամաններ ու սափորներ: Ուրախանում է «Ոգնիներ» մոխրամանով)

ՄՈՎՍԵՍ – Խելացի գործ է, համ պետքական բաներ են, համ սիրուն:

ԱՐՇԱԿ – Հա՞, պապ...

ՄՈՎՍԵՍ – Մաքուր ձեռք ունես, բալա...

ԱՐՇԱԿ – Դե տեսնո՞ւմ ես... իսկ ինձ ասում են՝ իրավաբան դառ...

ՄՈՎՍԵՍ - *(Դռան կողմը նայելով, շշուկով)* Գործ չունես...

(Ծիծաղում են)

Արշակ ջան, համա թե մի բան ցույց չտվեցիր ինձ: Էն ի՞նչ էր, որ բացեցիր ու փակեցիր վռագ-վռագ, տարար դրիր էն կողմ:

ԱՐՇԱԿ – Ո՞րը... ախ, հա՛, կիսատ գործ է ու կարծես թե չի ստացվում: Ցույց տալու բան չկա, ապեր:

ՄՈՎՍԵՍ – Հը, հը, բեր տեսնեմ, բեր...

ԱՐՇԱԿ – Դե լավ, էլի, այ պապ...

ՄՈՎՍԵՍ – Այ բալա, որ հիմա չբերես էլ գիշերը թաքուն գալու եմ տեսնեմ: Բա ես էդքան համբերություն ունեմ:

(Արշակը տատանվելով հանում նրան է մեկնում մի շրջանակ)

ԱՐՇԱԿ – Դե որ շատ ես ուզում, տես...

(Մովսես ապերը նայում է ու ցնցվում: Շրջանակի մեջ նրա կնոջ դիմանկարն է: Արույրով՝ գորշ պղնձի վրա, հեքիաթային գծերով նրա ջահել օրերի նկարը: Մովսես ապերը համբուրում է սրբապատկերի նման, փղձկում է):

ՄՈՎՍԵՍ – Ուրեմն հիշո՞ւմ ես տատիդ:

ԱՐՇԱԿ – Հա, ապեր...

ՄՈՎՍԵՍ – Ուրեմն նա էլ մնաց, ապրեց: Մնաց-ապրեց գրքի նման, երգի նման, խաչքարի նման:

ԱՐՇԱԿ – Հա, ես էդպես էի ուզում, էդպես պիտի լինի, պապ, ու մի օր որ ցուցահանդես բացեմ, ամենալավ տեղում կախելու եմ այս նկարը ու տակն էլ գրելու եմ՝ «Տատիկիս դիմանկարը»:

ՄՈՎՍԵՍ – Վարսենիկ անունն էլ կգրես, տղա ջան, քեզանից ի՞նչ է գնում: Գրի, թող մնա, ապրի, էլի:

ԱՐՇԱԿ *-(Օրծաղելով)* Եղավ, պապ... Անպայման կգրեմ, անպայման... Հիմա ի՞նչ ես ասում, գնո՞ւմ ես գյուղ, թե՞ ...

ՄՈՎՍԵՍ – Ինչի՞, ի՞նչ է եղել որ...

(Գրկում է թոռանը, ծիծաղում են: Բացվում է դուռը, հայտնվում է Սիրարփին)

ՄԻՐԱՐՓԻ – Հայրիկ... ինդրում եմ... Արշակ... եկեք ճաշելու...

(Մթնեցում)

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

(Հյուրասենյակը: Ճոխ սեղանի շուրջը նստած են Մովսես ապերը, Արշակը, Մարկոսը: Սիրարփին սպասարկում է):

ՄԱՐԿՈՍ – Հը, մի-մի բաժակ օղի չխմե՞նք:

ՄՈՎՍԵՍ *-(Հազում է)* Այսինքն թե՛ ախորժակի համար մի բաժակը չի խանգարի:

ԱՐՇԱԿ – Չի խանգարի, չէ... կարող է նույնիսկ երկրորդն էլ չխանգարի...

ՄԱՐԿՈՍ *-(Կնոջը)* Մի քիչ էլ դու խմի, Սիրիկ...

ՄԻՐԱՐՓԻ – Մերսի, Մարկ: Հայրիկ, հավի այս բուղը վերցրեք: Ձեռքով, ձեռքով, թոչունը կարելի է ձեռքով ուտել...

ՄՈՎՍԵՍ – Դե ասա մարդավարի, էլի...

ՄԱՐԿՈՍ – Արշակ, ապերը գործերդ հավանե՞ց:

ՄՈՎՍԵՍ – Դուք դեռ օրհնելու եք էն օրը, որ Արշակ Մարգարյանը աշխարհ եկավ: Մեր ցեղը հիշվելու է նրանով:

ԱՐՇԱԿ – Դե լավ, էլի, պապ, հանկարծ կհավատամ:

ՄՈՎՍԵՍ – Եվ հավատա, հա: Եվ գիտե՞ս ինչի, որովհետև, տղա ջան, համ մաքուր ձեռք ունես, համ էլ մաքուր հոգի: Բսկ հիմա ձեզ դառնամ, իմ տղա Մարկոս ու իմ հարս...

ՄԱՐԿՈՍ – Պետք չէ, հայրիկ...

ՄՈՎՍԵՍ – *(Շրթունքը դողացնելով)* Կներեք ինձ, տղա ջան, հարս ջան, մեծ մարդ եմ ու հին խոսք է, թե մեծ մարդն ու երեխան մի բան են: Ճիշտ խոսք է:

ԱՐՇԱԿ – Վերջ տուր, պապ:

ՄՈՎՍԵՍ – Չէ, բալա ջան, պիտի ասեմ: Ես էլ եմ հասկանում, որ ձեզ շատ եմ նեղություն տալիս, համա, աստված վկա, դիտմամբ չեմ անում: Էդպես է դուրս գալիս:

ՄԱՐԿՈՍ – Դե լավ, հայրիկ: Ամեն ինչ հասկանալի է: Մենք այդ թեմայով խոսեցինք Սիրարփիի հետ և եկանք այն եզրակացության, որ դու փաստորեն ոչ մի մեղք չունես այդ չարաբաստիկ պատմության մեջ: Այսպես ասած՝ հանգամանքներն են այդպես դասավորվել:

ՄԻՐԱՐՓԻ – Եվ վերջապես, եթե այդ տղան, կներեք արտահայտությանս, լրբությամբ է զբաղվում, մե՞նք պետք է հովանավորենք նրան, այստեղ են ասել...

ԱՐՇԱԿ – Մի լինի ուրագի պես, միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ...

ՄԻՐԱՐՓԻ – Հա... Չէ, ի՞նչ ես ասում, այ տղա: Էն մյուսը, որ ասում է՝ սելը ճռռալու տեղ, սելվորն է ճռռում...

ԱՐՇԱԿ – Էլի կապ չունեք, բայց կեցցես, մամ:

(Օրծաղ)

ՄՈՎՍԵՍ – Ուրեմն, ներող եղեք: Թե որ մի էնպիսի բան կանեմ, որ հնարավոր լինի բանի տեղ չդնել, բանի տեղ մի դրեք: Թե որ էնպիսի բան անեմ, որ հնարավոր չլինի բանի տեղ չդնել, ներս մի գցեք, երեսիս ասեք: Ես չեմ նեղանա: Որովհետև... Էս քաղաք ասածիդ մեջ ես քոռ մարդու նման եմ ման գալիս՝ ոտքերիս տակը տնտղելով ու ձեռքերս առաջ մեկնած: Ուրեմն մի սպասեք, որ փոսն ընկնեմ, կամ էլ թե դիպչեմ ու վնասեմ մի անմեղ մարդու: Բռնեք ձեռքս ու անցկացրեք ինձ համար էս նեղ-նեղ տեղերով, մինչև որ տեսնենք, թե ինչ է լինելու:

ԱՐՇԱԿ – Այ պապ, դու իսկական հոռետոր ես, ցավդ տանեմ...

ՄՈՎՍԵՍ – Ի՞նչ եմ, ի՞նչ եմ...

ԱՐՇԱԿ – Ասում եմ՝ դու՛ պիտի իրավաբան դառնայիր, դո՛ւ...

ՄՈՎՍԵՍ – Վայ թե անգրագիտությունս խանգարեք, այ բալա:

ԱՐՇԱԿ – Չէր խանգարի, չէր խանգարի, ընդհակառակը: *(Օրհնադրում է և դառնում է հորը)*
 Ճիշտ չէ՞ մ'ասում, Մարկոս Մոխսեյիչ, չի խանգարում, չէ՞:

ՄԱՐԿՈՍ – Էլ չիմես, ա՛յ տղա...

ՄԻՐԱՐՓԻ – Արշա՞կ... *(Բարձրացնում է գլուխը)* Դե լավ, ես էլ եմ խմում: Դուք հիանալի խոսեցիք, հայրիկ: Ճիշտ չէ՞, Մարկ: Մեզ էլ շատ մի մեղադրեք: Երբեմն հունից դուրս ենք գալիս, որովհետև նյարդայնանում ենք: Այս հսկայական տունն իմ ուսերի վրա է...

ԱՐՇԱԿ – Վտիտ...

ՄԻՐԱՐՓԻ – Հա... Ես հոգնել եմ, այդպես չէ՞, Մարկ: Եվ հատկապես հիմա, երբ Մարինեն իր ընկերների հետ ծովափ է գնացել, խնդրեմ, Մարկը վաղը իր կոլեգաներին տուն է հրավիրել ճաշի... Պատահական մարդիկ չեն: Պատրաստություն է պետք: Իսկ ո՞վ պետք է անի: Ես պետք է անեմ, միայնակ:

ՄՈՎՍԵՍ – Ո՞նց թե մենակ: Բա ես ի՞նչ եմ: Իմ բանն ու գործն ինչ ա: Ասա, հարս ջան, ինչ պետք ա, ու դու մի կողմ քաշվիր:

ՄԻՐԱՐՓԻ – Օ, ոչ, ոչ, պետք չէ...

ՄՈՎՍԵՍ – Չէ, ինչի՞: Տարիքիս մի նայեք, աչքս լավ տեսնում ա, ու մատներս էլ չեն դողում: Ըհը, տեսեք, մի կաթիլ կթափե՞մ: *(Լիքը բաժակը զգուշությամբ բարձրացնում խմում է, և հաջողությունից ոգևորված թափով սեղանին է դնում բաժակը)* Ըհը... *(Բաժակի պոչը պոկվում է ու մնում սեղանին: Մովսեսը՝ սարսափած):* Պո՛ւյ...

(Երկյուղալի լռություն է տիրում: Եվ հանկարծ տիկին Սիրարփին ծիծաղում է: Թեթևացած ծիծաղում են նաև մյուսները)

ՄԻՐԱՐՓԻ – Էտո կ սչաստյու, ատեց, չարը խափանվեց... *(Լավում է դռան երաժշտական զանգը)* Էս ո՞վ է...

(Արշակը գնում է դուռը բացելու: Գնում է նաև Սիրարփին, և միջանցքից լավում է Հասոյի ահեղագոչ որոտը)

ՀԱՍՈ - *(Կադրից դուրս)* Շատ, շատ կներես, մեծ ախպեր, էստեղ չի՞ ապրում իրավաբան ընկեր Մարկոս Մարգարյանը... Ես իրա հոր ընկերն եմ: Էս մի պուլիկ յուղը որտե՞ղ դնեմ, քուր ջան... Էս էլ անքաշ պանիր ա, վալլահ-բիլլահ... իսկ էս գառը...

ՄԱՐԿՈՍ - *(Ապշած)* Դա ո՞վ է...

(Մովսես ապերը կծկվում է տեղում, ամուր փակում է աչքերը):

(Մթնեցում)

ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

(Միջանցքն ու հոլը: Բոլորը խառնվել են իրար: Գառը մայրում է, Տուզիկը հաչում է: Մովսեսս ապերը փորձում է դուրս քշել գառանը և արկղները դուրս տանել: Հասոն խանգարում է):

ՄՈՎՍԵՍ – Բա եղա՞վ, Հասո, Բա եղա՞վ...

ՀԱՍՈ – Հը, ի՞նչ եղավ, ի՞նչ եղավ, մարդ չե՞նք:

ՄԱՐԿՈՍ – Սա ի՞նչ է նշանակում: Ո՞վ է այս մարդը:

(Միայն տիկին Միրարփին չի կորցնում իրեն: Նա նայում է գառանը և նրան պատկերացնում սեղանին խորոված, մաղաղանոսի փունջը ատամների մեջ):

ՄԻՐԱՐՓԻ – Լռություն, լռություն: Մարկ, տեղդ, oh, ներիք, Տուզիկ, տեղդ: Մարկ, լռիր մի վայրկյան, խնդրում եմ: Հայրիկ, հանգստացիր, հայրիկ, բաց թող գառնուկի ոտքը: Այ այդպես: Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ եք վիրավորում մարդուն: Ի՞նչ եք խառնվել իրար: Չե՞ք տեսնում, մարդը անկեղծ սրտով է բերել:

ՀԱՍՈ – Վայ, արևդ ապրի, քուր ջան, անկեղծ սրտով, վալլահ-բիլլահ, շատ անկեղծ սրտով: Մարդ ենք, չե՞, իսան ենք, չե՞:

ՄԻՐԱՐՓԻ – Եվ վերջապես իր տնից է բերել, շուկայից չի գնել, ուրիշից պարտքով չի վերցրել... Ուրեմն պետք է ընդունել և շնորհակալություն հայտնել:

ՄԱՐԿՈՍ – Միրարփի, ես քեզ չեմ հասկանում...

ՄԻՐԱՐՓԻ - *(Շշուկով)* Որ այս բոլորը հյուրերիդ սեղանին դնեմ՝ կհասկանաս... Այս մարդուն աստված է ուղարկել... *(Մյուսներին)* համեցեք, ներս համեցեք: Ես հիմա թեյ կբերեմ...

ՀԱՍՈ – Նեղություն մի քաշի, քուր ջան, որ մի բաժակ չայ լինի, այ էսքան հերիք ա:

ՄԹՆՑՈՒՄ

(Հյուրասենյակ: Երևում է, որ Հասոն պատմել է ամեն ինչ: Թեյ է խմում)

ՀԱՍՈ – Էդպես չե՞, ախպեր: Մի բան սուտ ասացի՞:

ՄՈՎՍԵՍ – Չէ, աստված վկա, ոնց որ ինձ ասեց, ընենց էլ քեզ, Մարկոս: Թե կարաս օգնիր մարդուն, տղա ջան:

ՄԻՐԱՐՓԻ – Կաշմար կակոյ տը... դրա համար մարդ են կալանավորո՞ւմ:

ՀԱՍՈ – Ասա, է, ասա, է՛, քուր ջան...

(Մարկոսը կկոցել է աչքերը, մտածում է)

ՄԱՐԿՈՍ – Չեմ թաքցնի, այդ գործը ինձ մոտ է:

ՀԱՍՈ -(Աղաղակում է) Վա՛յ, Անդո, Անդո, ես քո ցավը տանեմ...

ՄԱՐԿՈՍ – Անդոն ո՞վ է, գործում Անդո չկա:

ՄՈՎՍԵՍ – Ուրախությունից խելքը թոցրեց: Ուրեմն կարա՞ս մի բան անես...

ՄԻՐԱՐՓԻ – Մարկ...

ՄԱՐԿՈՍ – Ի՞նչ անեմ, ինչպե՞ս մերժեմ ձեզ: Բոլորդ էլ հարազատ մարդիկ եք: Տեսնենք, կաշխատեմ մի բան անել: Տեսնենք:

ՄԻՐԱՐՓԻ – Մարկ...

(Մարկոսը համբուրում է կնոջ ձեռքը)

ՀԱՍՈ – Վայ, ես քո սուրբ լեզվին մեռնեմ: Մորից նոր-նոր ծնվավ Ջամիլս:

ՄԻՐԱՐՓԻ – Մարկ, տի պրյամո պրելեստ...

ՄԱՐԿՈՍ -(Բարձրացնում է ձեռքը) Ես ասացի՝ տեսնենք: Հարյուր տոկոսով չեմ խոստանում: Ասացի՝ տեսնենք: Որոշ դժվարություններ կան, որոնց մասին ես չեմ կարող հայտնել ձեզ: Պետք է զբաղվեմ, պետք է հաղթահարեմ, տեսնենք...

ՀԱՍՈ – Վայ, հաղթի ու հարի, արևիդ մեռնեմ: Դու մենակ ինձի ասա, թե ինչ ա հարկավոր: Ինչի՞, Հասոն երեխա՞ ա, չգիտի, թե քեզնից բարձր ինչքան մարդ կա: Դու ասա ինչ ա հարկավոր, դրադ քաշվիր ու հաղթի ու հարի: Հասոն տուն-տեղ կծախի: Հասոն իր ոչխար ու փեթակ կծախի ու պարտքի տակ չի մնա, վալլահ-բիլլահ:

ՄՈՎՍԵՍ – Բա դա եղա՞վ, Հասո:

ՄԱՐԿՈՍ – Ավելորդ բաներ եք ասում: Ոչինչ վաճառել պետք չէ: Դուք ինձ նայեք ու նայեք մեր տանը: Մենք որևէ բանի կարիք ունե՞նք:

ՀԱՍՈ – Ախպեր, ես քո՞ն եմ, չեմ տեսնո՞ւմ: Վալլահ-բիլլահ: Ուրիշ մարդիկ կան, գործ հաստատողներ կան, գործ ստուգողներ կան, մեքենագրուհի կա, բան կա...

ՄՈՎՍԵՍ – Վայ...

ՄԱՐԿՈՍ – Դե լավ, լավ, վերջ տվեք: Հասկացանք, հասկացանք, Դավոյան: Հիմա պետք չէ:
Եթե պետք լինի, ես ձեզ կասեմ... *(Աչքով է անում հորը, իբր ապահով մնա, խաբում եմ):*

ՄՈՎՍԵՍ - *(Կադրից դուրս: Հիացունքով նայելով որդուն)* Շան տղեն իսկական իրավաբան
ա, էլի:

ՀԱՍՈ - *(Վեր է կենում)* Դե, աստծո չափ շնորհակալ եմ, ապրեն բալեքդ, քուր ջան... բրդի
մասին անհոգ մնա...

ՄՈՎՍԵՍ – Վայ...

ՀԱՍՈ – Այ մարդ, դե թող խոսենք, էլի... Ընկեր Մարգարյան, շատ-շատ կներեք, որ էդ գառ
կալմակալ զցեց էստեղ ու ես պլպլան պոլի վրա անհարմար բաներ արավ:

ՄԱՐԿՈՍ - *(Շիճաղելով)* Բոլորովին էլ չեմ նեղանում: Մյուս անգամ կմորթեք՝ նոր կբերեք:
Կարիք չկա շենքով մեկ հայտարարություն տալու:

ՀԱՍՈ – Էդավ, ընկեր Մարգարյան, ես աչքիս վրա:

ՄՈՎՍԵՍ – Վայ, ես ինչե՞ր եք խոսում:

ՄԱՐԿՈՍ – Կատակ եմ անում, հայրիկ, կատակ...

ՀԱՍՈ – Բա ես ի՞նչ եմ անում: *(Երկուսն էլ նայում են Մովսես ապորը ու թփթփացնում նրա
թիկունքին):*

ՄԹՆԵՑՈՒՄ

(Պատշգամբ, թախտին կիսապառկած Մովսես ապերը, մտքերի մեջ է: Փակվում են աչքերը թե չէ, Մարկոսի դեմքն է իր առջև և Սիրարփիի դեմքը: Նրանք հայտնվում են ասես մշուշի մեջ):

ՄԱՐԿՈՍ – Մեկ էլ այդպիսի բան չանես, հայրիկ...

ՄԻՐԱՐՓԻ – Աշխարհում այնքան ցավ կա, բոլորը ձե՞զ են տվել:

ՄԱՐԿՈՍ – Ինչո՞ւ ես պետք է ստիպված լինեի ընդառաջել նրան, ինչո՞ւ:

ՄԻՐԱՐՓԻ – Ամեն պատահական մարդու տուն չեն բերի, հայրիկ:

ՄԱՐԿՈՍ – Ես ինչո՞ւ պիտի զիջումների գնամ, ինչո՞ւ պետք է որոշ չափով շրջանցեմ օրենքները՝ հիմար կատակների սիրահար ինչ-որ տղաների համար: Ինչո՞ւ, ինչի՞ համար...

(Պատշգամբ: Մովսես ապերը)

ՄՈՎՍԵՍ -(Կադրից դուրս) Ինչի համա՞ր... գառան համար, մեղրի ու պանրի համար... ինչի՞ համար... Է՛հ, մարդկությունը դառավ մանրություն...

(Հնչում է մուտքի դռան զանգը: Մովսես ապերը ցնցվում ու ականջ է դնում: Մի պահ լռությունից հետո լսվում է տիկին Սիրարփիի ճիչը: Ինչ-որ ձայներ, չրխկոց: Մովսես ապերը վեր է թռչում տեղից)

ՄՈՎՍԵՍ – Էս ինչ նոր օյին ա առավոտ գիշերով...

(Կադր: Անցում)

(Միջանցք: Հովր: Տիկին Սիրարփին վիճում է ինչ-որ տղամարդկանց հետ, որոնք ուզում են մի հսկա արկղ ներս բերել)

ՄԻՐԱՐՓԻ – Ես այլևս չեմ կարող... Ես այլևս չեմ կարող... բռժե, չտո գա նակազանիյե...

ՄԵԿԸ – Ճամփա տուր, այ ընկերուհի...

ՄՅՈՒՍԸ – Մովսես ապերն ա կարգադրել:

ՄԻՐԱՐՓԻ – Մարկ... Մարկ...

(Հայտնվում է Արշակը՝ մազախոփվ)

ԱՐՇԱԿ – Ասենք թե մայրս ճամփա տվեց, այդ արկղը ինչպե՞ս եք ներս մտցնելու, սիրելի բարեկամներ:

ՄԵԿԸ – Ո՞նց թե ոնց...

ՄՅՈՒՍԸ – Պահ, արա, դյուզ ա ասում, է՛, մտնիլ չի...

(Նկատում են Մովսես ապորը, նետվում են դեպի նա)

ՄԵԿԸ – Ապիր, պիրել ենք, համա հարսդ հիլ չի անում...

ՄՅՈՒՍԸ – Դոնից ներս չի մտնում, է՛, ներս, ապեր...

ՄՈՎՍԵՍ – Էսպես կանենք... Սնդուկը բաց կանենք ու գործիքները մեկ-մեկ կտանենք բալկոն:

ԱՐՇԱԿ - *(Օրծաղում է)* Ո՛ւՖ, ինչ գործ կանենք, ապեր... Էս բոլորը գործիքնե՞ր են:

ՄԻՐԱՐՓԻ – Ի՞նչ գործիքներ:

ՄՈՎՍԵՍ – Հե՛չ, իմ գործիքներն են, հարս ջան: Չաքուչ-մաքուչ ա, կուճուր զնդան ա, կեռիկ-մեռիկներ են, քյալփաթին-մյալփաթին ա...

ՄԻՐԱՐՓԻ – Եվ այդ բոլորը դուք ուզում եք պատշգամբ տանե՞լ...

ՄՈՎՍԵՍ – Պարտադիր չի, ոնց որ դու կասես, հարս ջան: Ուզում ե՞ս մի ուրիշ սենյակ տանենք:

ՄԻՐԱՐՓԻ – Բայց ես չեմ հասկանում ո՞ւմ են պետք այդ գործիքները:

ՄՈՎՍԵՍ – Ո՞նց թե ում են պետք: Ես հո էստեղ պարապ չեմ մնալու:

ՄԵԿԸ – Նա էդ տեսակ մարդ ա... Մի օր որ չաշխատեց, կմեռնի... Մովսես ապերն ա, է՛...

ՄԻՐԱՐՓԻ – Եվ այդ... դրանցով ի՞նչ եք մտադիր անել, չեմ հասկանում:

ՄՈՎՍԵՍ – Վահ, չհասկանալու ի՞նչ կա... Դարբին մարդու համար գործ չի՞ գտնվի, ինչ է... Բահ-մահ կսարքեմ հայաթավորների համար: Բոստանները կացինով են փորում, փոցխ-մոցխ, ուրազ-մուրազ կսարքեմ: Իսկի որ չլինի՝ դանակ-մկրատ կսրեմ... Հետո դե հարևաններ են, էլի, թեշտ-մեշտ կունենան կարկատելու, երկաթի աման-չաման կունենան... Լավություն կանեմ... կապրեմ...

ՄԻՐԱՐՓԻ - *(Ճչում է)* Մարկ... Մարկ...

ՄՈՎՍԵՍ – Ի՞նչ պատահեց, քեզ մատաղ...

ՄԻՐԱՐՓԻ – Մարկ, յա բոլշե նե մոգու...

(Հայտնվում է Մարկոսը՝ անդրավարտիքի կապերը ուսը գցելով, տեսնում է հավաքված մարդկանց)

ՄԱՐԿՈՍ – Սա ի՞նչ աղմուկ է:

ՄԻՐԱՐՓԻ - *(Նետվում է նրա գիրկը, հեծկլտում է)* Նրան ասա... որ իր... չաքուչ-մաքուչները... կորցնի աչքիցս... թե չէ ես կմեռնեմ...

ՄԱՐԿՈՍ – Հայրի՞կ...

ՄԹՆԵՑՈՒՄ

(Պատշգամբ: Հայր ու որդի նստած են թախտի վրա)

ՄԱՐԿՈՍ – Հայրիկ, դու ուղղակի ձանձրանում ես և դրանից է, որ չիմանալով ինչ անել, անընդհատ զանազան պատմությունների մեջ ես ընկնում: Գնա քաղաք, հեր ջան, զբոսնի, մետրո նստի, վերջապես մատենադարան գնա կամ թանգարան... հիանալի նմուշներ կան:

ՄՈՎՍԵՍ – Լավ, տղա ջան, կգնամ, իսկ էդ թանգարանը որտե՞ղ է:

ՄԱՐԿՈՍ – Թանգարանը՞ ... թանգարանը, եթե չեմ սխալվում, սպասիր, իսկապես որտե՞ղ է թանգարանը... Գիտե՞ս ինչ, հայրիկ... ավելի լավ է մատենադարան գնա... Աշխարհի բոլոր ծայրերից գալիս են մեր մատենադարանը տեսնելու, մեր ազգային հարստությունն է... մեր պարծանքը... Արի ցույց տամ, այստեղից երևում է... Այ, էն շենքը տեսնո՞ւմ ես, անտառի տակ... Տես ինչ հոյակապ շենք է:

ՄՈՎՍԵՍ – Իսկ մեջն ի՞նչ կա:

ՄԱՐԿՈՍ – Մեջը... մեջը գրքեր են... *(կադրից դուրս)* վատ չէր լինի, եթե ես էլ մի օր ժամանակ գտնեի ու լինեի այնտեղ... ասում են հիանալի նմուշներ կան...

ՄՈՎՍԵՍ – Դե ասա գրադարան ա, էլի... Գնամ ի՞նչ անեմ, տղա ջան: Հա, Մարկոս, բա որ գրադարան ա, ինչի՞ են ուրիշ անուն տալիս: Գիտում չե՞ս:

ՄԱՐԿՈՍ – Դե լավ, չես ուզում, մի գնա... Ուրիշ տեղ գնա... Բա դու գնալու տեղ չունե՞ս: Էս մեծ քաղաքում ծանոթ-բարեկամ չունե՞ս:

ՄՈՎՍԵՍ – Պահ, ասում էի մնամ տանը՝ հարսին օգնեմ, թե չէ ինձ ինչ կա: Սկի չլնի, կգնամ Երվանդ Տրդատյանի մոտ: Հազար անգամ խնդրել ա:

ՄԱՐԿՈՍ – Դա ո՞վ է: Մեր... այսինքն ձեր գյուղի՞ց է...

ՄՈՎՍԵՍ – Ա՛յ որդի, բա դու Երվանդ Տրդատյանին չե՞ս ճանաչում: Ամբողջ աշխարհը գիտի: Օր չկա, որ թերթում նկարը չտպեն: Ռադիոյով էլ հո ամբողջ օրը երգում ա...

ՄԱՐԿՈՍ – Սպասիր, սպասիր, ժողովրդական արտիստը՞:

ՄՈՎՍԵՍ – *(Խնդմնդալով)* Բա ո՞վ:

ՄԱՐԿՈՍ – Համա թե կասես, հայրիկ: Դու նրան որտեղի՞ց ես ճանաչում:

ՄՈՎՍԵՍ – Ե՞ս... այ բալա, դու իսկի ինձ էնքան պաշած չկաս, ինչքան Երվանդը: Հիմի եկել հարցնում ես, թե որտեղի՞ց եմ ճանաչում...

ՄԱՐԿՈՍ – Հա, բայց ե՞րբ, որտե՞ղ...

ՄՈՎՍԵՍ – *(Չեռքը գրպանն է տանում)* Դու իրեն տեսած կա՞ս:

ՄԱՐԿՈՍ – Իհարկե:

ՄՈՎՍԵՍ – Դե որ տեսած կաս՝ սա ով ա և սա ով ա:

(Գրպանից լուսանկար է հանում և մեկնում է Մարկոսին)

ՄԱՐԿՈՍ – Պո՞ւյ...

ՄՈՎՍԵՍ – Բա՞:

ՄԱՐԿՈՍ – *(Չայնում է)* Սիրարփի... *(նրան է մեկնում լուսանկարը)*

ՄԻՐԱՐՓԻ – Ասոված իմ, ինչ երջանկություն... նա...նա գրկել է ձեզ:

ՄՈՎՍԵՍ – *(Պարծենկոտ)* Կյանքս կերավ, կպել էր, թե նկարվենք, հա նկարվենք: Ձոռով իրա ասածն արավ, նկարել տվեց...

ՄԻՐԱՐՓԻ – Ասոված իմ, որտե՞ղ...

ՄՈՎՍԵՍ – Մեր տանը, որտե՞ղ: Գյուղ էին եկել համերգի: Մի շաբաթ մնաց մեր տանը:

ՄԱՐԿՈՍ – *(Թերահավատ)* Ինչի՞, գյուղը նախագահ չունե՞ր, քարտուղար չունե՞ր և վերջապես ֆերմայի վարիչ չունե՞ր...

ՄՈՎՍԵՍ – Այ, հենց քու ասած նախագահն էլ մեր տուն բերեց: Ասաց՝ սիրելի արտիստը էնպիսի տուն է ուզում, որտեղ երեխա-բան չլինի: Խանգարող-մանգարող չլինի:

Որովհետև, ասաց, ականջները նուրբ են, ցավում են: Իսկ ամբողջ գյուղի մեջ մենակ մեր տունն ա, որտեղ ոչ երեխա կա, ոչ մեծ, բայլա ջան:

ՄԻՐԱՐՓԻ – Եվ մի շաբաթ շարունակ նա ձեր փոքրիկ գյուղում համե՞րգ էր տալիս:

ՄՈՎՍԵՍ – Նախ մեր գյուղն էնքան էլ փոքր չի: Հետո՝ մի օր երգեց ու հիվանդացավ: Մրսել էր: Անկողին ընկավ: Իսկ որ լավացավ, էլ չէր ուզում մեր տնից գնալ: Կյանքիս մեջ էսքան երջանիկ չեմ եղել, դարբին Մովսես, - ասում էր, - երանի ոչ մի գործ չունենայի, այ էսպես նստեի քեզ հետ, զրույց անեի ու երգեի քեզ համար, դարբին Մովսես: Դու կյանքում ինձ հանդիպած ամենահետաքրքիր մարդկանցից մեկն ես:

ՄԻՐԱՐՓԻ – Եվ այդպես էլ խոսո՞ւմ էր ձեզ հետ: Այդպիսի խոսքե՞ր էր ասում:

ՄՈՎՍԵՍ – Վայ, բա մենակ էր էր ասո՞ւմ: Հիմա ամաչում էլ եմ ասեմ: Ասում էր, դու ինձ քո տղան համարի, դարբին Մովսես, և իմացիր, որ քաղաքում երկու տուն ունես: Այսուհետև, ասում էր, Երվանդ Տրդատյանի տունը քո տունն է: Եթե իմանամ, ասում էր, որ քաղաք էս եկել ու ինձ չես հանդիպել, շատ փիս կնեղանամ:

ՄԱՐԿՈՍ – Հենց էդպես էլ ասո՞ւմ էր... փիս...

ՄՈՎՍԵՍ – Չէ, ասում էր խիստ կնեղանամ: Բայց էնպես էր ասում, ոնց որ ասեր՝ փիս կնեղանամ: Իսկ մնացածը գրաբար էր խոսում ու գրաբար էլ երգում էր. էնքան սիրուն, էնքան տխուր, որ լացս գալիս էր, թեև, ճիշտն ասած, խոսքերը չէի էլ հասկանում:

(Մարկոսն ու Միրարփին շարունակում են թերահավատորեն նայել նրան: Մովսես ապերը գայրանում է)

ՄԱՐԿՈՍ – Հա՞:

ՄՈՎՍԵՍ – Վայ, ուրեմն սուտ եմ ասո՞ւմ: Ուզո՞ւմ եք հիմա գնամ ու իրան մեր տուն բերեմ:

ՄԻՐԱՐՓԻ – Բռժե մոյ, մի՞ թե կգա:

ՄԱՐԿՈՍ – Գա մերոնց հետ ի՞նչ անի, ա՛յ կնիկ:

ՄԻՐԱՐՓԻ – Թող միայն նա գա ու էլ ոչ ոք չգա:

ՄԱՐԿՈՍ – Եղա՞վ... (շատ խիստ)

ՄԻՐԱՐՓԻ – Դե լավ, լավ, Մարկ... Բայց որ գա, ի՞նչ կլինի ձերոնց: Հիշո՞ւմ ես, Լիպարիտ Սոխակյանի ծնունդին մի դուրուկահար կար: Ի՞նչ եղավ: Հա, հիշո՞ւմ ես, որ ինժեներ Ստեփանը մի գազաններ վարժեցնողի էր տուն հրավիրել: Էլի ոչ մի սարսափելի բան տեղի չունեցավ: Երվանդ Տրդատյանը սեղանի զարդը կդառնա, Մարկ: Քո ընկերների տներում չե՞մ եղել, ինչ է: Նույնիսկ մի վաստակավոր արտիստ ծանոթ չունեն: Իսկ մեր

սեղանին կլինի իսկական ժողովրդական արտիստ, պետական մրցանակի
դափնեկիր... Պատկերացնո՞ւմ ես...

ՄԱՐԿՈՍ - (Օրծաղելով) Համոզեցիր... Դու մի թեթև ասա, հայրիկ, կգա, կգա, չի գա՝ չի գա:

ՄՈՎՍԵՍ – Որ ազատ ըլի, ոնց չի գա...

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ

(Օպերայի ծառայողական մուտքը: Ֆաներայից սարքած խցիկի մեջ նստած է պառավը, որ Տուզիկի նման զգգգված սպիտակ մազեր ունի: Մոտենում է Մովսեսն ապերը):

ՄՈՎՍԵՍ – Բարև, աղջիկ ջան...

ՊԱՌԱՎ – Չեմ հիշում, թե քեզ նման հեր ունեցած լինեմ:

ՄՈՎՍԵՍ - *(Օրծադրում է)* Խոսքի համար եմ ասում, քույրիկ: Ես Երվանդ Տրդատյանին եմ ուզում:

ՊԱՌԱՎ – Ուզում ես տեսնել, տոմս առ ու երեկոյան գնա դահլիճում նստիր:

ՄՈՎՍԵՍ – Դու ինձ սխալ հասկացար, ընկերուհի ջան: Երվանդ Տրդատյանը ինքն է կանչել ինձ:

ՊԱՌԱՎ – Ինձ բան չի ասել:

ՄՈՎՍԵՍ – Ես նրա ազգականն եմ, գյուղից եմ եկել... աղ... ընկերուհի ջան:

ՊԱՌԱՎ - Նա գյուղում ազգականներ չունի:

ՄՈՎՍԵՍ – Իսկ դու նրան զանգ տուր ու հարցրու: Չանգ տուր ու հարցրու, ասա դարբին Մովսեսն ա եկել ու տես ինքն ինչ ա ասում: Մենք շատ մոտիկ ենք իրար հետ, ընկերուհի ջան... նա ինձ շատ ա հարգում...

ՊԱՌԱՎ – Որ էդքան մոտիկ եք, տուն գնա...

ՄՈՎՍԵՍ – Վայ, ինքն էստեղ՝ ես տո՞ւն գնամ... Շատ մոտիկ ենք, հիվանդ էր, ուղիղ մի շաբաթ երեխու նման խնամել եմ... *(Կադրից դուրս)* Այսինքն՝ ճիշտը որ ասեմ, հիվանդ չէր, խմում էր... Էն ո՞նց էր խմում անաստվածը, ձեզ մատաղ, էն ո՞նց էր խմում: Խմում էր ու ասում՝ խենթանալ կարելի է: Մի անգամ մեղքս եկավ, ասացի՝ Երվանդ ջան, ես հո արաղը չեմ փսոսում, քեզ եմ փսոսում: Ախր մի բան կեր, որ չհարբես: Ու մեկ էլ Երվանդ Տրդատյանը ծիծաղեց.

- Խենթ է այս մարդը, - ասաց, - դու խենթ ես, դարբին Մովսես: Ես ուզում եմ հարբել, իսկ դու ասում ես՝ կեր, որ չհարբես... Ու ո՞նց էր երգում անաստվածը... Հատկապես էն մեկը. «Ջարթիր, նագելիդ իմ, զարթի՛ր» ...

Լացացնում էր... *(Գաղղում)* Հիմա ի՞նչ ես ասում, ընկերուհի ջան...

ՊԱՌԱՎ – Ես իրավունք չունեմ քեզ վերև թողնելու:

ՄՈՎՍԵՍ – Փառք ասածո, որ քո իրավունքը մենակ վերև թողնել-չթողնելն ա:

ՊԱՌԱՎ – Ի՞նչ, ինչ...

*(Հայտնվում է Երվանդ Տրդատյանը: Ամառային սքանչելի կոստյում, թիթեռնիկ փողկապ:
Դեմքը հոգնած է ու գեղեցիկ: Գալիս ու անցնում է առանց շուրջը նայելու):*

ՄՈՎՍԵՍ – Ընկեր Տրդատյան, ընկեր Տրդատյան...

(Դերասանը շրջվում, նայում է անտարբեր)

ՄՈՎՍԵՍ – Բարև ձեզ, ընկեր Տրդատյան:

ԵՐՎԱՆԴ – Բարև, բարև...

ՄՈՎՍԵՍ – Ես եմ, ընկեր Տրդատյան, չճանաչեցի՞ ք:

ԵՐՎԱՆԴ – Այո, այո, ինչպես չէ: Ես արդեն խոսել եմ տեղակալի հետ: Գնացեք նրա մոտ, նա կօգնի:

ՄՈՎՍԵՍ – Ո՞ւմ մոտ:

ԵՐՎԱՆԴ – Տեղակալի:

ՄՈՎՍԵՍ – Ինչի՞ համար:

ԵՐՎԱՆԴ – Ինչի՞... Պահակ չէի՞ ք ուզում աշխատել, կամ նման բան...

ՄՈՎՍԵՍ – Չէ, քեզ մատաղ: Ուրեմն հաստատ մոռացել ես: Ես Մովսեսն եմ, Մովսեսը, Չորաթան գյուղից:

ԵՐՎԱՆԴ – Ինչպե՞ս, ինչպե՞ս:

ՄՈՎՍԵՍ – Չորաթան...

ԵՐՎԱՆԴ – Չորաթա՞ն... Տարօրինակ անուն է: Ներեցեք, իսկ դա ո՞ր շրջանն է:

ՄՈՎՍԵՍ - *(Արդեն խեղճացած)* Շամշադին:

ԵՐՎԱՆԴ – Շամշադի՞ն... *(Մտածում է, հետո ուրախ)* Այո, այո, հիշեցի, ես երգել եմ այնտեղ:
Հիշեցի: Ինչպե՞ս եք, լա՞վ եք...

ՄՈՎՍԵՍ - *(Կոտրված)* Կանք, էլի... Որ մեր տանն էիր... մի քիչ հիվանդացար: Չե՞ս հիշում...
հիմա ո՞նց ես:

ԵՐՎԱՆԴ – Լավ եմ, լավ եմ, նոր դեր եմ պատրաստում... չափազանց ծանր դեր է... Ախ, հա...
Ես ձեզ ինչո՞վ կարող եմ... Եթե տոմսեր են պետք...

ՄՈՎՍԵՍ – Չէ, ուրեմն չճանաչեցիր...

ԵՐՎԱՆԴ – Չեմ կեղծի, չեմ հիշում: Գիտե՞ք, այնքան մարդկանց հետ ենք հանդիպում, այնքան
նոր դեմքեր են միանգամից... Կներեք, խնդրում եմ...

ՄՈՎՍԵՍ - *(Չարացած)* Հա, բա ինչ...

ԵՐՎԱՆԴ – Դե ցտեսություն, հաջողություն ձեզ... *(քայլում է, հետո շրջվում միանգամից)*
Ներեցեք, ինչպես ասացի՞ք: Ինչպե՞ս է ձեր անունը:

ՄՈՎՍԵՍ - *(Վերջին հույսով)* Մովսես... Դու ինձ դարբին Մովսես էիր ասում... *(Երվանդը լուռ
նայում է)*

ԵՐՎԱՆԴ – Այո, այո, կարծես թե հիշեցի... *(Կամացուկ)* Երևի խմում էի, հա՞:

ՄՈՎՍԵՍ - *(Ծիծաղելով, երջանիկ)* Հա, մի քիչ կար...

ԵՐՎԱՆԴ - *(Էլի կամացուկ)* Իսկ հիմա չեմ խմում... Դե, կներեք, հաջողություն ձեզ...
Ցտեսություն...

ՄՈՎՍԵՍ – Ընկեր...

*(Տրդատյանը հեռացել է: Խցիկի պատուհանից գլուխը դուրս է հանել պատավը և կարեկցաբար
նայում է Մովսես ապորը)*

ՊԱՌԱՎ – Չճանաչե՞ց, եղբայր...

(Մովսեսը մշուշոտ աչքերով նայում է նրան)

ՄՈՎՍԵՍ – Չհասկացա... *(Ու հանկարծ խոռված ասում է)* Բայց եղպես ո՞նց կլինի, քույրիկ:
Եղած-չեղածը մի ամիս առաջ էր... է՛... Մի շաբաթ... գրկում էր ինձ, երգում էր ինձ
համար: Ասում էր. ես քո որդին եմ, դարբին Մովսես... Հիմա ի՞նչ պատահեց: Էս ի՞նչ են
անում, էսպես ո՞նց եք ապրում, տնաշեններ... Քիչ մնաց հանեի ու... *(Հանում, կնոջն է
մեկնում լուսանկարը)* Բա տեղը չէ՞ր, որ հանեի ու ցույց տայի: Հը՞: Պահեի էդ սիրուն ու

սուտ աչքերի առաջ ու ասեի. չես ճանաչում, հա՞... բա սա ի՞նչ է, բա էս ո՞ւմ ես գրկել, շան որդի...

ՊԱՌԱՎ - *(Նկարը ձեռքին)* Ներս արի, արի, արի իրար հետ չայ խմենք, եղբայր ջան... Ու մի նեղացի... սա քաղաք է... Որ նորից ձեր տուն գա, չէ՞, անմիջապես կճանաչի ու կգրկի նորից, էդպես է... Սրանք քաղաքացիներ են, եղբայր ջան:

ՄՈՎՍԵՍ - Երանի հանդիպած չլինեի... Ի՞նչ կլինեի, երանի հանդիպած չլինեի...

ՊԱՌԱՎ - Մի տխրիր, Մովսես եղբայր, ու թե այնպիսի բան է, որ իմ ձեռքից կգա, ինձ ասա, ծանոթներ շատ ունեմ, ասա ի՞նչ է քեզ պետք... իմի, իմի չայդ ու ասա...

ՄՈՎՍԵՍ - Չէ, չէ, շնորհակալ եմ, քույրիկ ջան, ախր ինձ ոչ մի բան պետք չէր... մենակ գիտե՞ս ինչն էմ փստսում, որ էլ ոչ մի անգամ սիրտս չի լցվելու, հենց որ լսեմ նրա երգը... Հազա՛ր փստու...

(Մթնեցում)

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ

(Ռեստորանի մուտքը: Երաժշտության ձայն է գալիս: Դռան մեջտեղում կանգնած է Ներսեսը, իր համազգեստով: Մի քանի հոգի ուզում են ներս մտնել)

ՆԵՐՍԵՍ - Ես ձեզ հայերեն եմ ասում՝ ոչ մի ազատ աթոռ չկա... հավատում չե՞ք:

(Հայտնվում է Մովսես ապերը, նայում է)

ՄՈՎՍԵՍ - Պահ, գեներալ ա...

ՄԵԿԸ - Ընկեր ջան, դուք թույլ տվեք, մենք աթոռ կճարենք:

ՄՅՈՒՍԸ - Ես պոլր Միշայի փեսան եմ:

ԵՐՐՈՐԴԸ - Այ քեռի, բարև, ձեռքդ տուր, ձեռքդ տուր, բան եմ ասում:

ՉՈՐՐՈՐԴԸ - Ինձ նայեք, ընկեր: Դուք ինձ չե՞ք ճանաչում:

ՆԵՐՍԵՍ - *(Անվրդով ու հպարտ)* Բոլորիդ էլ ճանաչում եմ: Ձեռքդ հեռու տար, այ մարդ: Ես ձեզ հայերեն եմ ասում՝ ազատ աթոռ չկա: Հավատում չե՞ք:

(Մովսես ապերը հետաքրքրված նայում է գեներալին, ձայնը ծանոթ է: Գեներալն էլ նրան է նայում):

ՆԵՐՍԵՍ – Համա թե գալիս ես, Մովսես, համա թե գալիս ես: Դե ներս մտիր, ի՞նչ ես կանգնել, իբր թե քիչ ես ուշացել...

ՄՈՎՍԵՍ - *(Ապշած)* Ե՛ս...

ՆԵՐՍԵՍ – Չէ, ես... ճամփա տվեք, այ մարդիկ, չէ՞ք տեսնում, մեր գիշերային պահակն է:

(Մարդիկ դժկամությամբ, բայց հարգանքով տեղ են բացում: Եվ Մովսես ապերն ակամա հայտնվում է «Արմենիա» ռեստորանի նախասրահում: Կադրում նախասրահը: Մովսես ապերն ուժեղ լույսից կկոցում է աչքերը, նայում գեներալին):

ՄՈՎՍԵՍ – Պահ, Ներսես, դո՛ւ ես, այ քո տունը չքանդվի:

ՆԵՐՍԵՍ - *(Գցում է դրան շղթան)* Ես եմ, ես...

ՄՈՎՍԵՍ – Բա էդ ի՞նչ ես անում էստեղ, այ մարդ, էդ ի՞նչ գեներալի շորեր են:

ՆԵՐՍԵՍ - *(Շիճաղում է)* Ես ռեստորանի դրան պահակն եմ: Շվեյցարը, լսած կա՞մ:

ՄՈՎՍԵՍ – Պահ, քո տունը չքանդվի, էս որտե՞ղ ես հասել...

(Երկու մարդ են անցնում: Ներսեսը հանում է գլխարկը, խոնարհվում: Տղամարդկանցից մեկը մի բան է դնում Ներսեսի գրպանը)

ՆԵՐՍԵՍ – Անուշ արիք, նորից համեցեք: *(Գրպանից հանում է ճմրթված ռուբլիանոցը)* Ժլատ շան որդի...

ՄՈՎՍԵՍ – Այ տղա, ուրեմն գործդ էլի նույնն ա՞: Գյուղում ներս մտնողից էիր փող առնում, էստեղ դուրս եկողի՞ց:

ՆԵՐՍԵՍ – Դու էլ գյուղի կինոն բերիր համեմատեցիր պերվակլասնի ռեստորանի հե՞տ: Էստեղ ներս մտնողից ես եմ առնում, իսկ դուրս եկողն ինքն է տալիս: Էստեղ, ախպորս ասեմ, ես ավելի շատ փող եմ առնում, քան թե նույնիսկ քո տղա Մարկոս Մոխսեյիչը: Մեկ-մեկ բերում են, պատիվ են տալիս... Համա չնեղանաս, Մովսես ջան, գոնյա մեկ անգամ ձեռքը ջերը տարած չկա: Դե հիմա ամեն մարդ մի խասիաթ պիտի ունենա, չէ՞:

ՄՈՎՍԵՍ - *(Նեղացած)* Իսկ մեջքդ ո՞նց ա, մեջքդ... շատ կռանալուց հո չի՞ ցավում:

(Մի մարդ է անցնում: Գրպանից մի երեքնոց է հանում և մեկնում հեռվից: Ներսեսը մանրիկ քայլերով, գլուխը ծռած մոտենում է, խոնարհվում, վերցնում է թղթադրամն ու նորից խոնարհվելով բացում է դուռը)

ՆԵՐՍԵՍ – Անուշ արիք... Նորից համեցեք... *(Շրջվում է դեպի Մովսեսը)* Մեջքս ինչո՞ւ պետք է ցավի: Ֆիզկուլտուրա է: Իսկ որ հանկարծ ցավի, փառք աստծո, գրպանս դատարկ չի: Մացեստա կա, Խոստա կա, Էսենտուկի կա, Ջերմուկ կա... *(Բացում է դուռը, ասում*

հավաքված մարդկանց) Չորս հոգի: Հանգիստ: Միշայի փեսան ո՞րդ է: Դու էլ ներս արի: Ճիշտ է, Միշան փեսա չունի, բայց ներս արի, ներս արի... *(Վերցնում է թղթադրամները)* Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, շնորհակալ եմ... *(Փակում է դուռը)* Գնացինք, գնացինք:

ՄՈՎՍԵՍ – Ո՞ւր:

ՆԵՐՍԵՍ – Գնացինք, գնացինք:

(Մթնեցում)

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

(Կադրում ռեստորանի մի անկյունը: Սյան տակ երկտեղանոց սեղանի մոտ նստած է Մովսես ասպերը: Ներսեսը կանգնած է կողքին: Մովսես ասպերը ապշած դիտում է, թե ինչպես են ցատկոտում, գալարվում պարողները)

ՄՈՎՍԵՍ – Էս ի՞նչ են անում, քեզ մատաղ...

ՆԵՐՍԵՍ – *(Գոռալով)* Պար են գալի, պար... Ուտելու ի՞նչ կուզես, ա՛ Մուս...

ՄՈՎՍԵՍ – Ինչ որ տաս... *(Աչքերը պարողներից չկտրելով)* Սոված եմ, Ներսես ջան...

(Ներսեսը մատով կանչում է մի ջահել մատուցողի)

ՆԵՐՍԵՍ – Եղբայրս է, Թովմաս... ինչ-որ լավ բան կա... *(Մովսեսին)* Մի քիչ կխմե՞ս...

ՄՈՎՍԵՍ – Հա, մի բաժակ արաղ որ լիներ...

ՆԵՐՍԵՍ – Մի շիշ:

ՄՈՎՍԵՍ – Վայ, մի շիշն ինչ եմ անում, ես հու վիշա՞ պ չեմ:

ՆԵՐՍԵՍ – Չես խմի, թող մնա...

ՄՈՎՍԵՍ – *(Տատանվելով, հետո ծիծաղելով)* Ա՛ Ներս, մի բան ասեմ, նեղանաս ոչ: Գյուղում ոնց որ էնքան էլ ձեռնբաց չէիր: Քեզ ի՞նչ է պատահել:

ՆԵՐՍԵՍ – *(Ծիծաղելով)* Ա՛ Մուս... Էդ անտերը որ գրպանումդ չի լինում, իրան-իրան ժլատ ես դառնում, էլի: Թե չէ՝ ժլատը ունևորների մեջ կլինի, ախպեր: Չունևորի ժլատը ո՞րն ա: *(Երկուսն էլ ծիծաղում են սրտանց)* Դե դու հանգիստ կեր, խմիր, ես գնամ իմ գործին: Վախենաս ոչ, մին-մին կերևամ...

(Հայտնվում է ջահել մատուցողը, տասնյակ տեսակի խորտիկներ է դնում, իր ձեռքով լցնում է բաժակը)

ՄԱՏՈՒՅՈՂ – Մա կերեք, հայրիկ, մինչև որ տաք ճաշը կրերեմ:

ՄՈՎՍԵՍ – Վայ, էսքանից հետո էլ ուտե՞լ կլինի, տղա ջան... Էստեղ մի գորքի ճաշ կա:

(Տարակուսանքով նայում է երեք-երեք պատառաքաղներին, դանակներին: Վերցնում է բաժակը, գլուխը վեր բարձրացնում) Փառքը շատ, աստված, ռեստորանն էլ տեսանք... (Ձեռքով մի կտոր հաց է վերցնում, մի կտոր երջիկ, ուտում է: Լցնում, մի բաժակ էլ է խմում: Ետ է ընկնում այթոռին, նայում է շուրջը: Կողքի սեղանին չորս տղա են նստած, սեղանը լիքն է, շշերի մի մասը՝ դատարկ: Նայում է պարոտներին: Հիմա հայկական պար է: Մի մասն էլի թռչկոտում է, մի քանիսը հայերեն են պարում: Պարողների մեջ աչքի է ընկնում մի շեկ աղջիկ: Պարում է նազանքով, իբր թե ամոթով խոնարհելով աչքերը: Տղաներից մեկը բարձրանում է տեղից, մի քիչ օրորվելով մոտենում է աղջկան, գրպանից մի թղթադրամ է հանում, խցկում աղջկա պարզած ավիի մեջ: Ետ է դառնում: Տեղից բարձրանում է երկրորդ տղան՝ բարակ, սև բեղերով, մոտենում, պարզած ձեռքերի մեջ մի-մի թղթադրամ էլ ինքն է մեկնում աղջկան):

ՄՈՎՍԵՍ – *(Կադրից դուրս)* լավ ա, որ պապական սովորությունները պահպանում են, լավ ա... հեյ գիտի, հա , մեր հարսանիքները...

(Նվազը կտրվում է, աղջիկը թղթադրամները անփութորեն նետում է մորուքավոր թմբկահարի ոտքի տակ և գնում նստում է ճաղատ գլխով մարդու մոտ: Այնտեղից սկսում է նայել տղաներին ու ժպտալ):

ՄՈՎՍԵՍ – *(Կադրից դուրս)* Ա՛յ, էդ մինը չեղավ... որ քո մարդու հետ նստած ես, էլ ի՞նչ ես սրան-նրան ծիկրակում: Հմանչում չե՞ս:

(Մի բաժակ էլ է խմում: Դիտում է դահլիճը: Բոլոր սեղաններին ուտում են ու խմում, ուտում են ու խմում: Կողքի սեղանից ձայներ են լսվում: Արտասահմանյան ճչացող վերնաշապիկ հագած մեկը նախատում է ընկերներին՝ խեթ նայելով շեկ մազերով աղջկա կողմը):

ՄԵԿԸ – Արա, ի՞նչ եք թիթիզություն անում: Արա, ո՞վ ա էդ... էդ... որ հիսունանոցներ եք շպրտում:

ՄՅՈՒՍԸ – Տո քեզ ի՞նչ... քո փողերն եմ շպրտո՞ւմ... դուրս գալիս ա, տալիս եմ...

ՄՈՎՍԵՍ – Ո՞նց թե հիսունանոցներ... հիսունանոցները ո՞նց են շպրտում... Որտեղի՞ց... բա հետո ո՞նց են հետ վերցնելու: Էդ նվագողը հո կխառնի: Ո՞նց ա հիշելու, թե ումից ինչքան ա վեր կալել:

ՆԵՐՍԵՍ – *(Մոտենալով)* Հը, գործերդ ո՞նց են, այ տղա... էս ինչի՞ չես ուտում:

ՄՈՎՍԵՍ – Կուշտ եմ, Ներսես ջան, համա թե վախում եմ:

ՆԵՐՍԵՍ – Ինչի՞ց ես վախենում:

ՄՈՎՍԵՍ – Էն աղջկան տեսնո՞ւմ ես... Էս տղերքը նրա համար կռիվ են անելու... վախենում եմ...

ՆԵՐՍԵՍ – *(Օրծադում է)* Հիմա աղջկա համար ո՞վ ա կռիվ անում, ա՛ շաշ... Էդ ժամանակները անց են կացել: Արի, արի, մի-մի ստական իրար հետ խմենք, արի... *(Թիկունքով դեպի դահլիճն է շրջվում, կռանում է, թաքուն չիկացնում է բաժակը):* Մեր հողի կենացը, ա Մուս, մեր Մրդուզ սարի կենացը, Խաշամի տակից ջուր խմած տղերքի կենացը...

ՄՈՎՍԵՍ – *(Հուզված)* Երկու օր ա եկել եմ, համա սիրտս արդեն ճաքում ա... Ոնց որ թե մի տարի օտարության մեջ ըլնեմ... Դու ո՞նց ես դիմանում, այ տնաքանդ...

ՆԵՐՍԵՍ – *(Կարոտած)* Մարաթա ծառերը կա՞ն, Մովսես...

ՄՈՎՍԵՍ – Մինն ա մնացել... Էն էլ էսօր-էգուց վեր կընկնի...

ՆԵՐՍԵՍ – Վախ, վա՛խ... Միտդ ա՞, ինչ հարսանիքներ էինք անում էդ ծառերի տակ...

ՄՈՎՍԵՍ – Հարսանիք ասիր, միտս ընկավ, Ներսես, Էս նվագողները, որ շաբաշի փողերը հավաքում են, հետո ո՞նց են հետ տալու, խառնիլ չե՞ն...

ՆԵՐՍԵՍ – *(Օրծադում է)* Ո՞վ պիտի ետ տա, այ մարդ, առան՝ առան:

ՄՈՎՍԵՍ – Ո՞նց թե... հիսունանոցներ են... ա՛յ տղա:

ՆԵՐՍԵՍ – Հացդ կեր... հացդ կեր... կեր, խմի, մի լավ քեֆ արա էսօր: Ես էլի կգամ:

ՄՈՎՍԵՍ – *(Կաղրից դուրս)* Էդպես ո՞նց կլինի...

ՄԱՏՈՒՑՈՂ – Սա ձեզ են հյուրասիրում, հայրիկ... *(Տեղավորում է դուլլի մեջ):*

ՄՈՎՍԵՍ – Ի՞նչ:

ՄԱՏՈՒՑՈՂ – Շամպայն գինի է, բացե՛մ:

ՄՈՎՍԵՍ – Չեմ ուզում, չե՛...

ՄԱՏՈՒՑՈՂ – *(Ժպտում է)* Չի կարելի, հայրիկ, կվիրավորվեն, կնեղանան:

ՄՈՎՍԵՍ – Ո՞վ:

ՄԱՏՈՒՑՈՂ – Այս շիշն ուղարկողը... Այ, այն տղան... *(Գլխով ցույց է տալիս գանգրահեր տղային, որը ժպտալով նայում է Մովսես ապորը)*

ՄՈՎՍԵՍ – Իսկ էդ տղեն ո՞վ ա, բալա ջան, ինչի՞ ա ուղարկում:

(Մատուցողը թոթվում է ուսերը, նայում տղային, որը մոտենում է Մովսես ապորն ու նստում նրա դիմաց):

ԳԱՐՈՒՇ – Բարև, Մովսես ապեր:

ՄՈՎՍԵՍ – Բարև, տղա ջան: Դու ինձ որտեղի՞ց գիտես:

ԳԱՐՈՒՇ – Իսկ դու ինձ չե՞ս ճանաչում:

ՄՈՎՍԵՍ – Երեսդ ոնց որ տեսած ըլնեմ, բայց թե ո՞վ ես, կարում չեմ գլխի ընկնեմ:

ԳԱՐՈՒՇ – Սեփունց Մուշեղի թոռն եմ:

ՄՈՎՍԵՍ – Սեփունց Մուշեղի՞... Որի՞ տղեն ես...

ԳԱՐՈՒՇ – Քնարիկի:

ՄՈՎՍԵՍ – Քնարիկի՞... Իսկ հերդ ո՞վ ա, հերդ...

ԳԱՐՈՒՇ – Չես ճանաչի, Երևանցի է: Բա դու ինձ ո՞նց չես հիշում: Ամառները որ գյուղ էի գալիս, ամբողջ օրը քո դարբնոցում էի, փուքս էի փչում: Մի հատ էլ մանգաղ սարքեցի տատիս համար: Դու էլ հավանեցիր:

ՄՈՎՍԵՍ – Հա, հա...

ԳԱՐՈՒՇ – Պապս-տատս ո՞նց են:

ՄՈՎՍԵՍ – Կան, էլի... Գետատար տատիդ աչքերը փառակալել են... համարյա չի տեսնում ինեղճը:

ԳԱՐՈՒՇ – Հա, լսել եմ:

ՄՈՎՍԵՍ – Իսկ քո անունը ի՞նչ ա, տղա ջան... Գարուշը չե՞ս...

ԳԱՐՈՒՇ – Գարուշն եմ...

ՄՈՎՍԵՍ – Բա ի՞նչ ես անում, ի՞նչ գործի ես:

ԳԱՐՈՒՇ – *(Օրծադում է)* Համարյա թե քեզ նման դարբին եմ, Մովսես ապեր: Երկաթից կոճակներ եմ սարքում:

ՄՈՎՍԵՍ – Լավ ես անում: Արհեստը, Գարուշ ջան, ոսկե բիլագուկ ա, հին խոսք ա՝ ասում են արհեստավորը մինչև կեսօր սոված կմնա:

ԳԱՐՈՒՇ – Էդ կողմից փա՛ռք ասածո:

ՄՈՎՍԵՍ – Բա էդ կողքիդ տղե՞րքն ովքեր են:

ԳԱՐՈՒՇ – Իրար հետ ենք աշխատում:

ՄՈՎՍԵՍ – Հա...

ԳԱՐՈՒՇ – Բա ինչո՞ւ չես խմում, Մովսես ապեր: Ես քեզ պատիվ եմ տալիս, իսկ դու չես խմում: Դու փաստորեն իմ առաջին ուստան ես: Բա ես իրավունք չունե՞մ քեզ համար մի շիշ շամպայն բացելու:

(Ուզում է բացել)

ՄՈՎՍԵՍ – Բացիլ մի, խմում չեմ:

ԳԱՐՈՒՇ – Ինչի՞:

ՄՈՎՍԵՍ – Ես իմ իմացած բաներն եմ ուտում, խմում:

ԳԱՐՈՒՇ – Գինի է, էլի, սրա մեջ ի՞նչ կա, գազ տված գինի է:

ՄՈՎՍԵՍ – Խմում չեմ:

ԳԱՐՈՒՇ – Ես բացեմ, դու մի խմի:

ՄՈՎՍԵՍ – Այ տղա, ինչի՞ ես փչացնում:

ԳԱՐՈՒՇ – Պահ, ափսոսդ գալի՞ս է... Ուզո՞ւմ ես հարյուր հատ տրաքացնեմ կողքիդ, դրա եղած-չեղածն ի՞նչ է:

ՄՈՎՍԵՍ – Ուզում չեմ:) Նվագախումբը սկսում է մի աղմկալի համար: Ոչինչ չի լսվում:
Գարուշը ինչ-որ բան է ասում: Մովսես ապերը ցույց է տալիս նրա ընկերներին:
Գարուշը քայլում է դեպի կողքի սեղանը, հետո ետ է դառնում, վերցնում շամպայնի շիշը ու հեռանում: Մովսես ապերը շունչ է քաշում թեթևացած, մի բաժակ օղի էլ է խմում(

(Կադրից դուրս)

ՄՈՎՍԵՍ – Էս մինը չպիտի խմեի...

(Աղմուկի ձայն է լսվում: Շրջվում է դեպի կողքի սեղանը: Երկար մազերով տղան գրպանից ինչ-որ բան է ուզում հանել, ճչացող վերնաշապիկով տղան բռնել է նրա ձեռքը, չի թողնում: Նրանց սեղանի մոտ կանգնած է մի այլեհեր մատուցող):

ՄՈՎՍԵՍ – (Կաղերից դուրս) Ուֆ, լավ է, ուզում է հաշիվը փակի: Որ գնան, լավ կլինի, է՛, շատ լավ...

(Երկար մազերով տղան ցույց է տալիս, թե ենթարկվում է, բայց հաջորդ վայրկյանին պոկվում է տեղից, վազում նվազախմբի մոտ, ինչ-որ թղթադրամներ է նետում մորուքավոր թմրկահարին, որը թեքվում է՝ պատվերը լսելու համար: Նվազախումբը սկսում է հայկական պար: Տղան ետ-ետ է գնում: Աղջիկը պարզած ձեռքերով դեպի նա է գալիս, դեպի կենտրոն: Տղան գրպանից թղթադրամներ է հանում, տալիս է աղջկան: Բնքը չի պարում, միայն հպարտ նայում է, թե ինչպես է պարում աղջիկը: Ասես աղավնի է խաղացնում: Մյուս պարողները կանգ են առնում: Աղջիկը հրաշալի է պարում: Հանկարծ աղջկա մոտ հայտնվում է Գարուշը, գրպանից մի կապ թղթադրամ է հանում, քանդում, ոտքերի տակ է նետում ժապավենը, խառնում է թղթադրամները, կոացնում է աղջկա գլուխը և թղթադրամները թափում է գլխին, ուսերն ի վար, ոտքերի տակ:

Իրարանցում: Մատուցողները հավաքում են դրամները ոտքերի տակից, նրանց օգնում են նաև ֆինանսիստի համազգեստով երկու հոգի՝ կողքի սեղանից: Նվազողները իջել, հավաքում են: Ամեն ինչ խառնվել է իրար: Ոչ ոք չի նկատում, թե Մովսես ապերն ինչպես է հայտնվում իրարանցմանն անտարբեր կանգնած գեղեցկուհու և Գարուշի արանքում:

ՄՈՎՍԵՍ – (Դողացող շուրթերով) Ա՛յ տղա, բա դու տափը չե՞ս մտնում: Ա՛յ տղա, բա դու նամուս չունե՞ս: Էս ի՞նչ ես անում, խայտառակ մարդ:

ԳԱՐՈՒՇ – Գնա այստեղից, Մովսես ապեր, գնա, գնա...

ՄՈՎՍԵՍ – Քո Մուշեղ պապը յոթանասուն տարեկան ա, համա դեռ հունձ ա անում, որ տունը պահի: Քո Մագթաղ տատը քոռացել ա, մի օր նստի տաքսի, նրան քաղաք, բժշկի բեր: Փողեր ես շաղ տալիս, հա՞, շան լակոտ...

(Աղջիկը վախեցած է, Գարուշը բարկանում է):

ԳԱՐՈՒՇ – Այ մարդ, դու հո գիշերվա երազ չե՞ս... գնա, ասում եմ: *(Բռնում է ապոր ձեռքը, թեթևակի հրում: Մովսես ապերը ետ-ետ է գնում, դիպչում ինչ-որ մեկի, կորցնում է իրեն, նորից առաջ է գալիս, ու մի շառաչուն ապտակ հասցնում Գարուշին):*

ԳԱՐՈՒՇ – Յա, տո դու ո՞վ ես, է, որ ինձ խփում ես...

ՄՈՎՍԵՍ – Էդ ես չխփեցի քեզ, էդ քո Մուշեղ պապը խփեց, նեռի գավակ... Փողեր ես շաղ տալիս, հա՞ ... Էլ աշխարհի մեջ սոված մարդ չկա, հա՞ ... բոլորին հաց եք տվել, կշտացրել եք, հա՞ ... Պապիդ տան կտուրը փուլ ա գալի, իրեք հատ իտեռնիտ չի կարում առնի, որ փակի անձրևի դեմը, իսկ դու էստեղ պար ես գալի, հա՞ ... Բսկ դուք էստեղ պար եք գալիս, հա՞ ... Վեր-վեր եք թոչում, հա՞ ... Կամ թե էդ ինչո՞վ եք վեր-վեր թոչում... էդ ի՞նչ եք արել մարդկության համար, որ հիմի ուրախությունից վեր-վեր եք թոչում, ասեք՝ մենք էլ ուրախանանք, էլի... Էդ ի՞նչ եք արել, որ քեֆ եք անում, իժի ծնունդներ... *(Շրջվում է դեպի ֆինանսիստի համազգեստով մարդիկ՝ կարծելով, թե միլիցիայի աշխատողներ են):* Դուք էլ ապրեք, դուք էլ լավ եք անում, փոխանակ էս

լակոտների ձեռքը բռնեք, չորեքթաթ եք տալիս, փողեր եք հավաքում, ապրեք, շատ ապրեք...

(Աղմուկ է բարձրանում)

ՄԵԿԸ – Մա՞ որտեղից ծլեց... էս էլ մի նոր Կարաբալա...

ՄՅՈՒՍԸ – Բայց սա հո խուլիզանություն է: Ինչո՞ւ միլիցիա չեն կանչում:

ԵՐՐՈՐԴԸ – Սրան ո՞վ է ներս թողել, այ մարդ:

ՉՈՐՐՈՐԴԸ – Տեսնես ո՞վ է հարբեցրել, գովեցրել բիձուկին... Ոտքի վրա չի կարողանում մնալ:

ՀԻՆԳԵՐՈՐԴԸ – Լավ է, որ այսօր արտասահմանից մարդիկ չկան, ի՞նչ կարծիք պիտի կազմեին հայ ժողովրդի մասին:

(Հայտնվում է մետրոդոտելը: Հսկայական մի տղամարդ: Կանգնում է Մովսես ապոր դիմաց):

ՄԵՏՐՈՏԵԼ – Հանգիստ, հանգիստ... Դուք ո՞վ եք, ընկեր: Ինչո՞ւ եք խուլիզանություն անում: Դուրս անմիջապես, դուրս այստեղից: Դուք գիտե՞ք, թե որտեղ եք գտնվում...

(Մովսես ապոր լացը գալիս է, չի կարողանում խոսել, փակել է աչքերը, օրորվում է: Ուզում է դուրս գալ, չի կարողանում):

ՄԵԿԸ – Դե դուրս արեք, պրծեք, դա ո՞վ է, մի շահիանոց քեֆներս խարափ արեց...

ՄՈՎՍԵՍ – Ես դարբին եմ: Հիսունհինգ տարի չաքուչ եմ խփում: Ես որ հիշում եմ ինչ օրեր եմ քաշել, լացս գալիս ա, հա՛, հա՛, ու լավ եմ անում, որ լաց եմ լինում: Ես իրավունք ունեմ լաց ըլնելու: Իսկ դո՞ւք ով եք, է՛... *(Մրբում է աչքերի արցունքը՝ ձեռքով)* Ուտողներ չե՞ք: Ձեզ մի չանգյալն էլ քիչ ա, չեք կշտանում, մեր արցունք-քրտինքով դատած հացը իրեք-իրեք չանգյալ-դանակով եք կտրում, ուտում: Էդ չե՞ք: Ու փոխանակ ես ձեզ հարցնեմ, թե դուք ո՞վ եք, դուք եք ինձ հարցնում, թե ես ո՞վ եմ... Ես էս երկրի տերն եմ... Ես ձեզ պահողն եմ... Հասկացա՞ք...

(Խորը լռություն է տիրում: Մպասում: Ու մեկ էլ լպստված մի երիտասարդ ձայնը կեղծելով ասում է)

ԵՐԻՏԱՍԱՐԴ – Դուք լսեցիք զրույց բարոյա-խրատական թեմաներով: Այժմ լսեցեք լուրեր... *(Ու հանկարծ բոլորը քրքջում են, բոլորը: Մովսես ապերը նայում է նրանց արցունքոտ աչքերով, ու ապշած նկատում, որ բոլորը, բոլորը քրքջում են... նույնիսկ մետրոդոտելը կռացել, բռնել է փորը ու ծիծաղում է)*

ՄՈՎՍԵՍ - *(Խորտակված շշուկով)* Ինչի՞ եք ծիծաղում... ինչի՞ եք ծիծաղում, այ ձեր ցավը տանեմ... լացի վրա՞ եք ծիծաղում...

(Մթնեցում)

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

(Հրապարակի շատրվանը: Ոչ ոք չկա: Ձուրը ցայտում է վեր՝ լույսերի մեջ ողողված: Կամերան իջնում է ցած: Քարե բազրիքի վրա գլխահակ նստած է Մովսես ասպերը: Ննջո՞ւմ է, թե մտքերի մեջ է: Նրան է մոտենում նիհար, երկարահասակ, հարբած մի մարդ):

ՀԱՐԲԱԾԸ - Օ, ահա սքանչելի մի պատկեր. մարդը՝ ձուլված արհեստական բնությանը: Մեկ սիգարետ իր կրակով չի՞ գտնվի ձեզ մոտ, անձանոթ բարեկամ:

ՄՈՎՍԵՍ – Ի՞նչ...

ՀԱՐԲԱԾԸ – Ասում եմ՝ պատահաբար իր կրակով մի սիգարետ չէ՞ր գտնվի ձեզ մոտ:

ՄՈՎՍԵՍ – Ես քաշում չեմ:

ՀԱՐԲԱԾԸ – Ահա թե ինչ... Ուրեմն, չեք ծխում... Ուրեմն, թույլ տվեք հարցնել՝ ինչո՞ւ...

ՄՈՎՍԵՍ – Ի՞նչն ինչու...

ՀԱՐԲԱԾԸ – Ուզում եք երկա՞ր ապրել...

ՄՈՎՍԵՍ – Այ մարդ, ի՞նչ ես ուզում ինձանից:

ՀԱՐԲԱԾԸ – Յուրաքանչյուր հարց իր պատասխանն է պահանջում: Ուզում եք երկա՞ր ապրել: Թե՞ դուք էլ համոզված եք, որ երկրորդ անգամ եք ծնվելու: Օ, ո՞չ, անձանոթ բարեկամ, սխալվում եք: Երկրի վրա անմահություն չկա: Հանգիստ ծխեք ու հավատացեք ինձ՝ բոլորն էլ ի վերջո մեռնելու են: Բոլորը:

ՄՈՎՍԵՍ – Էդ ե՞րբ իմացար, տղա ջան...

ՀԱՐԲԱԾԸ – Օ, դա ես վաղուց գիտեմ, մի ծաղրեք ինձ, անձանոթ բարեկամ... Բայց ահա շատերը չգիտեն, շատ-շատերը: Նրանք կարծում են, թե նորից են աշխարհ գալու: Յնորք: Մին երազ: Նրանք կարծում են, թե այս մեկը հենց այնպես են ապրում, փորձի համար, և մի ավել կտոր հացի կամ պաշտոնական սանդուղքով մեկ աստիճան ևս բարձրանալու համար դիմում են ամեն տեսակի ստորության, շողոքոթություն են, կեղծավորում են, խաբում են, խարդավում են, դավեր են նյութում, կողոպտում են մերձավորին, լքում են երեխաներին ու ծնողներին, քծնում են ղեկավարներին, դավաճանում են ընկերներին, շնանում են... Որովհետև մտածում են, թե նորից են աշխարհ գալու: Ոչինչ, ասում են, ես մի կյանքը մի կերպ անցկացնենք, իսկ մյուս անգամ որ ծնվենք... արդեն ուրիշ կերպ կապրենք, մարդավարի... Հաշվի կառնենք

անցյալի սխալները ու ազնիվ կապրենք: Հավատացեք ինձ, անծանոթ բարեկամ, շատերն այդպես են մտածում: Իսկ ես, այ այսպես, մեկ-մեկ մոտենում եմ մարդկանց ու նրանց հիշեցնում, որ բոլորն էլ մեռնելու են: Բոլորը: Հավատացնում եմ, որ ոչ ոք չի մնալու և ոչ ոք չի ծնվելու նորից: Ու որովհետև լուրջ վիճակում ամաչում եմ, խմում եմ, հարբում եմ, որ համարձակություն ձեռք բերեմ: Կարծում եք պատահականությո՞ւն է, որ սովորաբար ստում են սթափ մարդիկ, իսկ ճշմարտությունը հարբածներն են ասում: Որովհետև ստելու համար համարձակություն պետք չէ, ճշմարտությունն ասելու համար է համարձակություն պետք:

Դրա համար էլ խմում եմ ու այ այսպես հերթով, մեկ-մեկ հիշեցնում եմ մարդկանց, որ մարդ մնան:

Դուք հասկացա՞ք ինձ, անծանոթ բարեկամ:

ՄՈՎՍԵՍ – Ոնց որ թե հասկացա... մենակ թե շատ ափսոս, որ ծխող չեմ, սրտանց սիգարեթ կտայի՝ ոնց որ դու ես ասում, իրա կրակով:

ՀԱՐԲԱԾԸ - *(Շիճաղում է)* Օ, ոչ, ո՛չ, մի ափսոսացեք... ես ևս ծխող չեմ... Սիգարեթը առիթ էր, որ մոտենայի ձեզ... իսկ հիմա թույլ տվեք հեռանալ ու շարունակել իմ աշխատանքը... Ես կարծես տեսնում եմ մեկին: *(Նկատում է մի անցորդի)* Ընկեր, ընկե՛ր, անծանոթ բարեկամ, մի սիգարեթ չի՞ գտնվի ձեզ մոտ՝ իր կրակով... *(Հեռանում է)*

ՊԱՏԿԵՐ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ

(Ավտոբուսային կայանք, «Շիգուլի» ավտոմեքենա: Մոմսես ապերը նստած է մեքենայի մեջ: Արշակը ցած է իջնում):

ԱՐՇԱԿ – Կարծես թե դեռ շուտ է, ապեր: Շամշադինի ավտոբուսը դեռ չկա:

ՄՈՎՍԵՍ – Այ բալա, վայ թե ուշացել ենք: Մի գնա տես...

(Արշակը հեռանում և վերադառնում է)

ԱՐՇԱԿ – Իմաստուն մարդ ես, պապ: Մեկն արդեն գնացել է, իսկ մյուսը կեսօրին է գնալու:

ՄՈՎՍԵՍ – Բա որ ասում էի... բա որ ասում էի... Հազար անգամ ասացի վեր կաց, ա՛յ տղա: Բայց դե քեզ վեր կացնե՞լ կլինի: Արջի քուն ես մտնում:

(Արշակը մորուքի տակ քորում է ծնոտը)

ԱՐՇԱԿ – Հա, բայց ո՞վ էր տեսել, որ Շամշադինի ավտոբուսը ճիշտ ժամանակին գնա: Դու այդպիսի բան կյանքում տեսնե՞լ էիր: Սա փաստորեն կազմակերպված գործ է:

ՄՈՎՍԵՍ - *(Խռոված)* Է՛ ...

ԱՐՇԱԿ – Այսինքն ո՞վ գիտե, գուցե աստծո մատն է խառը: Գուցե աստված ասում է՝ Մովսես, գիտե՞ս, որ նա Մովսես անունով մի աշխատակից է ունեցել... ասում է՝ Մովսես, մի շտապիր, բարեկամ, մի անգամ ևս կշռադատիր: Ինչո՞ւ ես գյուղ գնում: Հիմա ո՞վ ունեւ գյուղում: Մնա Երևանում, հանգիստ ապրի, էլի: *(Գլուխը ներս է տանում լուսամտից, գրկում ծերունու վիզը, մորուքը գլխին սեղմում):* Ո՞ւր ես գնում, պապ ջան, մնա, էլի... *(Մովսես ապերը չի պատասխանում և լուռ նայում է թոռանը: Արշակը այլ կերպ է հասկանում և տեղավորվում է մեքենայի մեջ):* Գնացինք, պապ:

ՄՈՎՍԵՍ – Ո՞ւր:

ԱՐՇԱԿ – Շամշադին:

ՄՈՎՍԵՍ – Այ տղա, դու հո շաշ չես: Հինգ ժամվա ճամփա ա...

ԱՐՇԱԿ – Էդ քո ավտոբուսի համար... հետո ես քեզ սարով եմ տանելու: Սրդուզի նոր ճամփով, պապ: Այնպես որ երեք ժամից գառը մորթում ես:

ՄՈՎՍԵՍ – Մորթեմ, քեզ մատաղ... Ոտքերիդ տակ մորթեմ...

(Արդեն ընթացքի մեջ: Շոգ է, քրտնել են երկուսն էլ)

ԱՐՇԱԿ – Դժվարը քաղաքից դուրս գալն է...

ՄՈՎՍԵՍ – ՈւՖ, բա դուք չե՞ք խեղդվում... Էսքան ծո՞ւխ կլինի...

(Պատուհանից դուրս թափահարում է թաշկինակը)

ԱՐՇԱԿ – Հը, վերջին անգամ եմ հարցնում, թե միտքդ փոխել ես, դեռ ուշ չէ, շրջե՞մ ավտոն, մեր տուն տանեմ քեզ...

ՄՈՎՍԵՍ – Չէ...

ԱՐՇԱԿ – Հա, պապ: Իմացա՞ր, որ ինժեներ Ստեփանը Արփիկին նորից տուն է բերել: Համոզել է, թե այն աղջիկը ուրիշ դռնից է դուրս եկել: Հը, ո՞նց է:

ՄՈՎՍԵՍ – Էդպես եղած կլինի... տղա ջան... իմ աչքերը վայ թե լավ չեն տեսնում:

ԱՐՇԱԿ – Վայ, մեռնեմ քո աչքերին, պապ:

ՄՈՎՍԵՍ – Էհ, սարսաղ-սարսաղ խոսալ մի:

ԱՐՇԱԿ – Վերջին անգամ եմ հարցնում, պապ... քաղաքից դուրս ենք գալիս: Ինչո՞ւ ես գնում, է՛ ...

(Մովսես ասպերը հիշում է: Կաղրում Մարկոսն է, խոսում է անկեղծ, ցավով):

ՄԱՐԿՈՍ – Ախր ինչո՞ւ, այ հեր, ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ...

(Կաղրում Միրարփին է)

ՄԻՐԱՐՓԻ – Ամոթ էլ է, մարդիկ ի՞նչ կասեն: Շատ չեմ ասում, գոնե մի քանի օր էլ մնայիր, հայրիկ: Գյուղում ի՞նչ կա, որ գնում ես...

(Կաղրում Մովսես ասպերն ու Արշակը)

ՄՈՎՍԵՍ – Վարսենիկը մենակ ա...

(Լռություն)

ԱՐՇԱԿ – Ասում եմ, ես էլ չգա՞մ գյուղ:

ՄՈՎՍԵՍ – Ի՞նչ...

ԱՐՇԱԿ – Ասում եմ՝ իբր թե ես ի՞նչ գործ ունեմ քաղաքում: Գործիք-մործիքներս հավաքեմ ու գամ: Սենյակներից մեկն ինձ արհեստանոց դարձնեմ ու... խաղաղ տեղ, օդը մաքուր, աղմուկ չկա, հեռախոս չկա: Կաշխատեմ օր ու գիշեր... Ինձ մի սենյակ կտաս, չէ՞, պապ:

ՄՈՎՍԵՍ – Ամբողջ տունը: *(Շպտում է)* Ճի՞շտ ես ասում, Արշակ ջան:

ԱՐՇԱԿ – Ինչո՞ւ չպետք է գամ: Մի քանի գործ ունեմ քաղաքում: Կվերջացնեմ ու կգամ: Ձեռքերս քոր են գալիս: Ախր մաման, պապան կյանքս ուտում են, թե թրխկացնում ես, չրխկացնում ես, օր ու գիշեր տանում ես գլուխներս: Իսկ քեզ մոտ՝ հեքիաթ: Մի լավ կաշխատեմ: Համ էլ դու իմ կողքին կլինես, խորհուրդ կտաս, կսովորեցնես: Ես քեզանից շատ բան ունեմ սովորելու, պապ:

ՄՈՎՍԵՍ – Էհ... Ես քեզ ի՞նչ պետք է սովորեցնեմ: Դու տեղով մեկ պրոֆեսոր ես:

ԱՐՇԱԿ – Մի ասա, մի ասա, պապ, բա ձի՞ն:

ՄՈՎՍԵՍ – Հա...դե... ուրեմն միտդ ա՞...

ԱՐՇԱԿ – Բա դա մոռանալու դա՞ս էր, այ պապ:

(Լռություն)

ՄՈՎՍԵՍ – Բալա ջան... Մի բան պիտի խնդրեմ... որ գալու ըլնես, էն... էն նկարն էլ կրերես հետդ, հա՞ :

ԱՐՇԱԿ – Տատի՞... Անպայման, պապ, անպայման կրեբեմ... Կգամ, իրար հետ կապրենք,
պապ:

ՄՈՎՍԵՍ – Հա, ցավդ տանեմ...

(Լռություն)

ՄՈՎՍԵՍ -*(Կաղրից դուրս)* Է՛, բալա ջան, դու գյուղ եկողը չես: Կտնքաս, կփնթփնթաս,
կբողոքես քաղաքից, համա գյուղ չես գա, չէ՛: Որովհետև, բալա ջան, արդեն սովորել ես,
էլ չես կարա ապրես առանց ծխի ու դալմադալի, առանց հեռախոսի ու նախշուն
պատերով արտաքնոցի, առանց ռեստորանի ու էն նվագելու բանի... Չես գա, տղա
ջան...

ԱՐՇԱԿ -*(Նայում է պապին: Կաղրից դուրս)* Էհ, պապ ջան, ես գիտեմ, թե դու հիմա ինչ ես
մտածում, բայց չգիտեմ, թե ինչ անեմ, ուրիշ ինչ անեմ, ասա՛, որ դու չտխրես, պապ, որ
մենակ չզգաս քեզ, որ ապրես...

(Մթնեցում)

Վ Ե Ր Ջ